Замечание. Черный Бог Ованес возродился в 19 веке. Он вышел… на крымский берег Черного моря! Это был величайший маринист Ованес, красивый брюнет, поистине Бог моря! В Новой цивилизации Айвазовского и только Айвазовского можно назвать Черным Богом, вышедшим из моря. Всё в нём совпадает с мифическим Черным Богом Ованесом: чёрные глаза и волосы, имя, божественные морские пейзажи…. Скажете: мистика. А чем она хуже вашей реальности?

VIII. ВЕДИ и ВЕДЫ

В Армении есть старинный топоним «Веди». Само название топонима подсказывает, что Веди в дохристианские времена был центром ведической культуры.

Армяне свою страну называют «Аведяц еркир» (буквально: «Первая ведическая страна»), понимается как «Божественная страна», «Священная страна». Есть соответствующие имена: Авед, Аведис (Авет, Аветис). «Евангелие» по-армянски: «Аведаран» или «Аветаран» (буквально: «Свод первых ведов», т.е. «Свод первых сокровенных знаний»).

Слово «вед» имеет синтаксическое и семантическое родство с армянским словом «havet» («вечно»). Слова «вед», «ведун» в армянском языке имеют свои «двойники» - «гед», «гидун» («гет», «гитун»); их смысл: знаток. Отсюда слово «гид». Слово «гет» в армянском языке означает также «река»: знание сравнивается с рекой. Интересный образ: течение воды символизирует постоянство и изменчивость знаний. Кстати, существовал фракийский народ под этнонимом «гет».

Слово «йог», обозначающее одно из главных понятий ведической философии, имеет свой прообраз в армянском языке: «гой» («сущее»).

В христианские времена ведуны подверглись жестоким гонениям и превратились в… ведьм. У этимологов бытует мнение, что имя «Яга» (баба Яга) из русских сказок происходит от слова «йог» (правильно: баба Йога).

Слово «вед» - словообразующий корень в русском языке: «ведать», «ведомость», «заведение», «сведение», «уведомление»…. Оно вошло в генетику русского языка в первоначальный период его формирования.

Возникает вопрос: почему древние армяне дали своему населённому пункту русское название «Веди»? Может быть, это были те же чудаки, кто дал русские названия вершинам Арарата?

IX. НАИРИ

Наири – одно из древнейших названий Армении.

⊃11

10⊃

Согласно библейским и армянским преданиям, земной рай находился в Исторической Армении. Поэтому было естественным считать Армению страной, находящейся на раю – на ирий (в древнерусском языке «рай» - «ирий»).

«Наири» - древнерусское название Армении.

Более точного по форме и содержанию истолкование слова «Наири» не существует.

Примечание. Из топонима «Наири» перестановкой слогов получается популярное у русских женское имя «Ирина».

X. КАЙЛАС

В Тибете есть священная гора Кайлас. Есть река Кайлас (Кайласа) на Русском Севере (топоним «Кайлас» имеется и в других регионах). Высота горы Кайлас равна 6666 м. Согласно эзотерическим знаниям, 6666 м. – Божья мера – единица измерения Бога (6).

Слово «кайлас» на армянском языке означает… «Божий шаг» («кайл» - «шаг», «Ас» - «Бог»). Божью меру древние армяне образно называли Божьим шагом по аналогии с принятым у людей способом измерять длины шагами.

В сокровенном слове «кайлас» сошлись три святые земли – Тибет, Русский Север и Армянское нагорье.

Замечание 1. Слово «Ас» в смысле «Бог» распространено у скандинавских арийцев. Изначально слово «Ас» в армянском языке означало «речь», «слово». «Ас твац» - «Давший речь», «Давшее слово». Речь человеку дал Бог, поэтому армяне Бога в основном называют Аствац (точнее – Астватз, сокращённо – Ас; в топонимах встречается также форма «Аст»).

Замечание 2. У древних армян существовало сокровенное имя Сайлас, созвучное имени Кайлас. «Сайл» армянское слово: «Карета». «Сайлас» - «Карета Бога». Что за странное божественное имя? Что означало «Карета Бога»? Не космический ли корабль?

Замечание 3. Божественное имя «Сайлас» ушло из Армении и потерялось на чужбине. Ныне это имя изредка мелькает на англо-американских меридианах. Теперь амбициозные, но по сути своей бытовые люди детям дают ничем не обоснованные, безродные имена… вместо красивых и родных имён типа «Кайлас» и «Сайлас», связанных к тому же, с Богом и Космосом…

Подобные сокровенные имена: Дайлас, Гайлас, Пайлас, Тайлас…

А где взять людей под эти шикарные имена?

XI. АРМЯНСКОЕ НАГОРЬЕ и РУССКИЙ СЕВЕР

Следы древних руссов на Армянском нагорье и древних армян на Русском Севере сохранились до наших дней. Есть «параллельные» топонимы Арзни, Ахтамар, Ван, Двин, Карс, Мегри на Армянском нагорье и Арза (Арзиль), Ахтама, Ван, Двина, Карс (Карское море), Мегра (реки: Большая Мегра и Малая Мегра) на Русском Севере.

Из вышеизложенного можно сделать выводы:

1. Армянское нагорье – Колыбель славян. Разумеется, не все первопредки нынешних славян жили «В горах великих и высоких». На Армянском нагорье когда-то жили самые первые носители этнонима «рус». Они принадлежали арменоидной расе, поскольку других рас там не было (2);

2. В архаичные времена Русский Север и Армянское нагорье представляли собой два центра единой Всемирной культуры;

3. Между Русским Севером и Армянским нагорьем существовала хорошо налаженная связь. Эти регионы активно взаимодействовали;

4. Ответы на многие вопросы древнейшей истории русских находятся на Армянском нагорье и в Передней Азии, а древнейшей истории армян – на Русском Севере и Заполярье;

5. Русско-славянский этнос формировался и участвовал в мировых событиях ещё в «доисторические» времена.

Виктор ВАГАНЯН,
доцент кафедры высшей математики РУДН (Москва)

Литература

1. Айвазян С. История России. Армянский след. – М.: КРОН-ПРЕСС. 1997.
2. Бунак В.В. Granica Armenica /Труды антропологии НИИ при МГУ, вып. II., М., 1927.
3. Геруни П. Армяне и Древнейшая Армения (на арм. яз.). – Ереван, «Тигран Великий», 1996.
4. Лесной С. Откуда ты Русь. – М.: «Алгоритм», 2007.
5. Макнамара Э. Этруски. – М.: ЦЕНТРПОЛИГРАФ, 2006.
6. Мулдашев Э.Р. В поисках города богов. Том I. – М.: «Аиф-Принт», «ОЛМА-ПРЕСС», 2003.
7. Свято-Русские Веды. Книга Велеса. – М.: ФАИР-ПРЕСС, 2001.
Тилак Б. Арктическая родина в ведах. – М.: ФАИР-ПРЕСС, 2002.

6⊃

ПРИЗНАНИЕ

Что там природа, вся история полна лжедмитриев, анастасий, лохнесси, мюнхаузенов, домовых, фей, гулливеров, царевен-лягушек, снежных людей, спящих красавиц, гномов, леших, сутлик ворсканов и прочих существ, наличие которых трудно опровергнуть.

Все же человечество не перестает делать серьезные попытки борьбы с ложью и обманом. Именно для этого существуют клятвы, присяги, декларации, подписи, докладные, анкеты, резюме, автобиография. Хотя, если глубоко копнуть, станет непонятным, что такое клятва или присяга, какое они имеют гражданское или юридическое обоснование и что с вами происходит такого конкретного внутри, когда вы прикладываете руку к Библии, Конституции или Уголовному кодексу?

Имеет ли клятва срок давности и годности, не противоречит ли она правам человека, может ли ее нарушение быть амнистировано? А что если торжественная клятва произносится в самой церкви перед алтарем, например, между обвенчанными христианами? Как поступать, если после этого процесс пойдет буднично, как после обычного районного загса, и приведет к банальному разводу? Наказуем ли такой атеистический исход или его все же со спокойной совестью внести в список отпущения грехов?

Чтобы не осложнять картину дальше, остановимся на твердом убеждении и сделаем напрашивающийся вывод из вышесказанного: правда без лжи не имеет научного, даже обиходного применения, не говоря уже о смысле. Отделять ложь от правды – довольно трудоемкий процесс, к тому же напрасный, неблагодарный: они обе имеют одинаково достойное право на совместное существование.

Таков алгоритм нашей жизни, установленный в еще очень старые, допотопные времена.

Су ХУДА.



Дома причта Армянской церкви в Москве признаны памятниками культурного наследия

Архитектурный ансамбль - дома причта Армянской церкви Воздвижения Креста 19 века в Армянском переулке Москвы признаны памятниками культурного наследия народов Российской Федерации регионального значения. Памятниками стали еще около 90 зданий и сооружений, расположенных на территории Москвы.

Мэр Москвы Юрий Лужков подписал соответствующее распоряжение, основанное на федеральном законодательстве и на решении межведомственной комиссии при Правительстве Москвы по вопросам постановки объектов, обладающих историко-культурной ценностью, под государственную охрану в качестве объектов культурного наследия регионального значения.

Հայ եկեղեցի

ԵՎ ԿՐԿԻՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՕԼԻՄՊԻՅՍԿԻ ՊՈՂՈՏԱՅՈՒՄ

Ամեն անգամ, երբ ոտք ես դնում Մոսկվայում կառուցվող եկեղեցական համալիրի շինհրապարակ, հպարտությամբ ես համակվում: Աշխարհի՞կ զգացում է: Ոչինչ: Հոգևորի կվերածվի, երբ կդադարես ցատկոտել շինանյութերի ու աղբակույտերի վրայով:

Հայ եկեղեցու տեղի թեմի առաջնորդ Եզրաս սրբազանի մոտ այս անգամ լավ առիթ եղավ ծանոթանալու համալիրի նախագծի հեղինակ, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի դոցենտ Արտակ Ղուլյանի հետ: Ճգնաժամի հարուցած դժվարությունների և դրանց հաղթահարման «տիտանական» ջանքերի շուրջը զրույցից հետո սրբազանն առաջարկեց, որ կառույցում կատարված աշխատանքների մասին այս անգամ պատմի ինքը` ճարտարապետը: Կանգնեցինք հենց շինհրապարակի կենտրոնում:

- Ներկա փուլում հիմնականում տարվում են երեսպատման աշխատանքները, - ասում է Ղուլյանը, - քանի որ ներքին հարդարման աշխատանքները կարող են իրագործվել նաև ձմռանը: Իսկ բոլոր օբյեկտների ընդհանուր երեսպատումը, հեշտ է ասելը, կազմում է մոտ 15000 քմ: Այն իրականացնում են Հայաստանից եկած շինարարները, քանզի միայն նրանք գիտեն տուֆի մշակման



Մայր տաճարը



Նախագծի հոգեւոր եւ աշխարհիկ ղեկավարները

«գաղտնիքները»:

Մայր տաճարում երեսպատումից բացի դեռ շատ գործ կա անելու, իսկ ահա մատուռը, որը «փոքր» է սոսկ տաճարի համեմատ, շինարարները պատրաստվում են հանձնելու առաջիկա ամիսներին: Հատուկ ուշադրություն են գրավում բազում զարդաքանդակները, խաչերն ու հարթաքանդակները: Մոտ 70-80 տոկոսով երեսպատված են վարչական մասնաշենքը և դպրոցը: Տարօրինակ է, բայց այս ժամանակահատվածի հիմնական դժվարությունը կապված է Հայաստանից տուֆի առաքումների ձգձգումների հետ:

- Հայ շինարարներն այստեղ, անվարան կարող եմ հավաստել, անթերի են աշխատում, և ես ուղղակի հիացած եմ նրանց վարպետությամբ, - շարունակում է Ղուլյանը: «Ավելին, երևանցի մասնագետների հետ համագործակցությամբ նրանք ստեղծել են հատուկ մի հաստոց, որը զարդաքանդակի գծագիրը վերածում է քարե քանդակի: Ասել է թե` հայ եկեղեցաշինության մեջ տեղ են գտնում ժամանակակից տեխնոլոգիաներ. տվյալ հաստոցը 8 ժամում իրականացնում է մինչև երեք ամսվա ձեռքի որակյալ աշխատանք: Մի ուրիշ ինքնաշեն սարք էապես հեշտացնում է կամարների ու ձևավոր տարրերի մշակումը»:



Արդիականն ու ավանդականը



Վարչական մասնաշենքը

Արտակ Ղուլյանը, որ շատ այլ եկեղեցիներ էլ է նախագծել, այնքան է սիրահարված իր այս ստեղծագործությանը, որ կանոնավոր կերպով այցելում է Մոսկվա և անմիջականորեն հետևում շինարարության ընթացքին: Արմատական փոփոխություններ չի մտցնում, սակայն ճշգրտում կամ հարստացնում է զանազան մանրամասներ (օրինակ` մատուռը երկու կողմից զարդարող հուշաքարերի վրա որոշեց «դրոշմել» հայոց այբուբենն ու «Հայր մերը»): Իսկ երբ Մոսկվայից բացակայում է, այդ գործը լրիվ



Մատուռը

վստահում է կառույցի գլխավոր ինժեներ Համլետ Պողոսյանին: Թեև էլեկտրոնային կապն ամենօրյա է: «Շատ բանիմաց, աշխատասեր, բարեխիղճ մասնագետ է», - ասում է ճարտարապետը:

Եզրաս սրբազանը «ի լրումն» նշեց, որ ճգնաժամը` ճգնաժամ, բայց աշխատանքները կանգ չեն առնում: Նա պատմեց, որ մի անգամ, երբ հնարավորություն չի եղել ժամանակին վճարելու աշխատավարձերը,



Մատուռի գմբեթը

հայ շինարարները սփոփել են նրան` ոչինչ, սրբազան ջան, դարդ մի արեք, եթե պետք լինի, ձրի էլ կաշխատենք, ասել են

➲13

12➲

նրանք, ի խորոց սրտի հուզելով հոգևոր առաջնորդին:
Անցնենք լուսանկարային լեզվին: Ինչպես տեսնում եք, Ռուսաստանի մայրաքաղաքի նշանավոր Օլիմպիյսկի պողոտայում հիրավի հառնում է եկեղեցական, բայց նաև ազգային-կրթական-մշակութային-համայնքային վեհաշուք մի կենտրոն:


Դպրոցը


Ասպծո զորությամբ սրբազանը կոփրում է քարը

ՏԱՐԻՔԸ ՊԱՏԿԱՌԵԼԻ ՉԷ, ԲԱՅՑ ԳՈՐԾԵՐԸ...



Տարիներ առաջ, երբ առիթ եղավ ծանոթանալու Ս. Պետերբուրգի այն ժամանակվա հոգևոր հովիվ Եզրաս աբեղա Ներսիսյանի հետ, նա ինձ հրավիրեց նոր-նոր պետությունից «խլված»՝ նշանավոր Նևսկի պողոտայի վրա գտնվող Սբ Կատարինե հայկական եկեղեցի և առաջնորդեց... դեպի ներքնահարկ... Մեղա քեզ, Տեր Աստված, «մարդաբոյ» կեղտաջուր էր կանգնած: Հետո ցույց տվեց հակաեկեղեցական նոու-հաուն՝ գմբեթն ու հատակը տարանջատված էին միջանկյալ առաստաղով: Ի՞նչ նպատակի ասես չէր ծառայել այդ տարաբախտ շինությունը բոլշևիզմի տարիներին՝ պահեստ, արհեստանոց, արվեստանոց: Երևի սրբապղծություն կլիներ արդեն այդ հոգնած կառույցն անվանել եկեղեցի: Ապրեն պիտերցի հայերը, որ թև ու թիկունք կանգնեցին իրենց հոգևոր հովվին ու սեղմ ժամկետում միացյալ ուժերով վերանորոգեցին, նորացրին, գեղեցկացրին և տեղի հայության առջև վերաբացեցին «Նևսկու գոհարի» դռները: Մինչ այդ «ձեռք էր բերվել» նաև Վասիլևսկի կղզու մյուս հայկական եկեղեցին:

Հեշտ է ասել՝ հետ վերադարձրեց: Բայց ի՞նչ համառ ջանքեր են թաքնված այդ հակաչինովնիկական մաքառումներում: Քավ լիցի, եթե խոսքը վերաբերում է եկեղեցուն: Իսկ եկեղեցապատկան շենքե՞րը, օրինակ: Պատմում են, որ հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումներից մեկի ժամանակ այն տարիների քաղաքապետ Անատոլի Սոբչակը հումորով ասել է, որ եթե Եզրաս Ներսիսյանի նման մի քանի օժտված դիվանագետ ունենար իր ապարատում, ապա սարեր շուռ կտար: Սակայն պետերբուրգյան իր առաքելության գլխավոր նվաճումը հոգևոր հայրը համարում է այն, որ իրեն հաջողվեց եկեղեցու շուրջը միավորել տեղի հայությանը և տասնամյակներ հետո քաղաքում ստեղծել կրոնական-ազգային համայնք:

Բայց փոխվեցին մասշտաբները, երբ նա տեղափոխվեց Մոսկվա որպես Հայ եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ: Եզրաս սրբազանը ձեռնամուխ եղավ, ինչպես ինքն է ասում, հոգևոր «խոպանի» վերացմանը: Հսկա մեգապոլիսն ուներ ընդամենը մեկ՝ խեղճուկրակ Սբ Հարություն եկեղեցին, որը տասնամյակներ շարունակ նորոգման հոտն էլ չէր առել: Բարվոք չէր վիճակը նաև թեմի մնացած վայրերում: Սրբազանը ծավալուն խնդիր դրեց իր առջև՝ ոչ թե սոսկ նորացնել մայրաքաղաքի միակ եկեղեցին, ոչ թե սոսկ կառուցել նոր եկեղեցի, այլ ստեղծել այնպիսի մի համալիր, որը բավարարեր մոսկվացի հայերի ոչ միայն կրոնական, այլև ազգային-կրթական-մշակութային պահանջմունքները: Երևանցի ճարտարապետ Արտակ Ղուլյանը հղացավ նախագիծը, այն արժանացավ Ս. Էջմիածնի օրհնությանը և միաձայն հաստատվեց Մոսկվայի քաղաքաշինական ատյաններում: Արդեն կառուցվող համալիրի մեջ մտնում են մայր տաճարը, մատուռը, ընդարձակ կրթական ու վարչական մասնաշենքերը: «Ազգը» հաճախ է հանգամանալի լուսանկարային ռեպորտաժներ նվիրել շինարարության ընթացքին: Եզրաս սրբազանը այսօր էլ պայծառանում է, երբ հիշում է, թե ինչպես կարողացավ իր շուրջը համախմբել Մոսկվայի հայ մեծահարուստ, ազդեցիկ, նվիրյալ հայերին ու ներկայացնել իր նպատակները: Հենց առաջին օրը հանգանակվեց կլորիկ մի գումար, որը լիուլի բավարար էր շինարարությունն սկսելու համար:

Թեմի առաջնորդին բնորոշ չէ «միակողմանի» գործունեությունը, ինչքան էլ դա առաջնային լինի: Քաղաքային իշխանություններից նա վարձակալեց քառահարկ մի շենք, հիմնանորոգեց ու դարձրեց կրթական օջախ՝ «Հայորդեաց տուն», որտեղ տեղի հայ մանուկները, երիտասարդները և տարեցները հաղորդակցվում են լայն իմաստով հայ կյանքին: Սկսեց հրատարակել ամսագիր: Ի դեպ, ինչն է նաև հատկանշական սրբազանի խառնվածքին. լինելով կրոնական գործիչ, նա ակտիվորեն առնչվում է նաև տեղի համայնքային, հասարակական և, ինչու չէ, քաղաքական կյանքին: Երբ նա ինձ առաջարկեց եկեղեցուն կից ամսաթերթ հրատարակել, ապա ինձանից մեծ ջանքեր չպահանջվեցին համոզելու նրան, որ այդ հրատարակությունը չպիտի լինի զուտ կրոնական, այլ ընդգրկի թեմի հայության կյանքի բոլոր սկզբունքային կողմերը:

Երբ Եզրաս սրբազանը առաջին անգամ եղավ մոսկովյան նշանավոր Պոկլոննայա Գորայի Հաղթանակի զբոսայգում, իրեն վիրավորված զգաց: Ո՞նց թե, այնտեղ կա, բնական է, ռուսաց եկեղեցի, բայց կա նաև մզկիթ, սինագոգ, իսկ ահա չկա... հայկական եկեղեցի: Շատ չանցած նա քաղաքի մեծերին ներկայացրեց գողտրիկ, զվարթնոցատես, սքանչելի մի մակետ, որին չընդառաջել անկարելի էր: Այնպես որ մոսկվացի հայերը շուտով գլուխ գովելու ևս մի լավ առիթ կունենան: Իսկ ինչքա՜ն եկեղեցիներ են կառուցվել թե նորացվել թեմի ամենատարբեր վայրերում: Եվ առհասարակ շատ ակտիվ է մեր եկեղեցին Ռուսաստանում:


Լինելով ՌԴ նախագահին առընթեր կրոնական միավորումների հետ փոխգործակցության խորհրդի անդամ (ի դեպ, միակը Անդրկովկասից), Եզրաս սրբազանը իրավունք ունի թեմական կարևորագույն հարցերով դիմելու նույնիսկ ռուսաց պետության աշխարհիկ առաջնորդին: Սակայն իրականությունն այնպիսին է, որ մեծ մասամբ զանազան ու ներկա փուլում գլխավորապես համալիրի շինարարության հետ կապված տարախուրթին հարցերով նա գործ է ունենում քաղաքային իշխանությունների ու առաջին հերթին քաղաքապետի հետ: Եվ հասնում է իր ուզածին: (Մի անգամ հարցրի սրբազանին, թե Յուրի Լուժկովը «չի՞ վախենում» իրենից, երբ հանդիպում են: Ծիծաղելով, նա, որպես «գաղտնիք» ասաց, որ ինքը չի սիրում իր խնդիրներով ներկայանալ քաղաքապետարան, այլ գերադասում է առավելության հասնել զանազան ընդունելությունների, ոչ պաշտոնական միջոցառումների ժամանակ: Բանը հասել է նրան, գոհունակությամբ ասաց առաջնորդը, որ նման անբռնազբոսիկ միջավայրում «բարեհոգի» քաղաքապետը, տեսնելով ինձ ու ձեռքը մեկնելով, արդեն ինքն է ժպտալով հարցնում՝ սրբազա՛ն, էլ ի՞նչ հարցեր ունենք լուծելու):

Ինչո՞ւ ենք այսքան հանգամանորեն պեղում մեր եկեղեցու խոշորագույն թեմերից մեկի հոգևոր առաջնորդի գործունեությունը: Շատ պարզ պատճառով՝ լրացավ նրա ծննդյան 50-ամյակը: Տակավին պատկառելի տարիք չէ, բայց ինչքա՜ն պատկառելի գործեր են արվել: Ու կարվեն, կարող եք չկասկածել: Ճիշտ կլինի, եթե ասենք, որ Եզրաս սրբազան Ներսիսյանը ժառանգել է Հայ եկեղեցու դարավոր «կրոնապետական» գեները:

Ռուբեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Մոսկվա

ՎԱՆԱՁՈՐԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔ

Կմարմնավորվի հոգևոր, ազգային, մշակութային կոթող



Հուշարձանի էսքիզ-նախագիծ

Տեսք փողոցի կողմից

Վանաձորի Մյասնիկյան և Աբովյան փողոցների հատման վայրում՝ Սուրբ Թարգմանչաց հրապարակում կմարմնավորվի իր մեջ մեծ խորհուրդ կրող կոթող:

Մեզ հետաքրքրող հարցերին փոքրիշատե պատասխաններ ստանալու ակնկալիքով զրուցեցի նախագծի հեղինակ, Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Վահան քահանա Ազարյանի հետ:

- Մեր պետական ազգային շահը պահանջում է հավատքի միասնական դավաբանություն, հոգևորի ճանաչողական ու գործնական միաբանություն: Կրոնը ոչ միայն հոգևոր, այլ կենսական դաս է՝ ազնիվ, արդար, ճիշտ, ասել է՝ քրիստոնեաբար ապրելու դաս, ասել է՝ նվիրվածություն իր սրբություններին:

Հայի ոգին միշտ էլ սերմանված է եղել աստվածային նյութով, այս հոգևոր ավիշն էլ նոր շնչով կլիցքավորի նրա բարոյականությունը, հեռու պահելով նրան հոգեկործան վտանգներից, հոգևոր շփոթից: Մեր ժողովուրդը հավատքով մի ողջ ժամանակաշրջան է ապրել: Եվ որքան էլ ապրել է, չի եղել մի ժամանակ, որ չկերտի՝ հայացքը սպասումով ու հավատով միշտ դեպի ապագան: Հավատքը, որ է աստվածային այն նյութը, որ դուք ներշնչում եք, միշտ էլ եղել է ամենահիմնական և ամենաառաջնայինը, որով շաղախված է եղել հայի կյանքը: Դարերի խորքին երբ մենք նայենք՝ գտնելու համար մեր այսօրը, գտնելու համար մեր վաղվա օրը, հստակ կերևա մեր ինքնության արժեքային համակարգը:

- Հայի բարոյական արժեքը իր ինքնության իսկական արմատների մեջ է: Ինչպես Աստվածաշունչն է ասում. «Եթե արմատը սուրբ է, ուրեմն ճյուղերն էլ սուրբ են»: Մեր ժողովրդի արմատը աստվածային սրբությամբ է լցված, քանի որ ունեցել ենք նախնիք, ովքեր այսօրվա սերնդի հպարտություննն են և լինելիության գրավականը, գաղտնիքը մեր հարատևության: Աստված իր շնորհները և ողորմությունը լցրեց մեր երկրի և ժողովրդի վրա, քանի որ այստեղ ապրում և գործում էին այնպիսի մարդիկ, որոնց շնորհվեց հայոց գիրը ստեղծելու, թարգմանական հմտության, Աստծուն և ճշմարտությանը թարգման լինելու հանճարը:

Այսօր էլ մեր ժողովուրդը, հանձին մեր Սուրբ եկեղեցու, կա, գոյություն ունի և կերտում է նոր գալիքը: Իսկ այն բավականին բարդ է, կարոտ է ամենօրյա խնամքի: Այդ խնամքի մաս է կազմում ազգային գաղափարախոսության և հոգևոր կրթության դաստիարակություննն ու սերմանումը: Դրանք զանազան տեսակների են լինում, թե դպրոցում, թե բանակում, թե մշակույթի օջախներում, և թե եկեղեցաշինությամբ ու ազգային եկեղեցական միջոցներով:

Բոլոր ժամանակներում էլ այս բարձր պատասխանատու գործը միշտ էլ իրենց ուսերին են վերցրել հիմնականում հոգևոր ազգային գործիչները:

Լուսնի առաջին քարտեզագիրը՝ Գալիլե՞յ, թե՞ Հերիոթ

Ուղիղ 400 տարի առաջ անգլիացի մաթեմատիկոս ու աստղագետ Թոմաս Հերիոթը իր աստղադիտակը ուղղեց դեպի Լուսին, որպեսզի կազմի դրա մակերևույթի մանրամասն քարտեզը: Հերիոթը մի քանի ամսով կանխել էր իրեն՝ Գալիլեո Գալիլեյին, որը համարվում է Երկրի արբանյակի առաջին քարտեզագիրը: Սակայն Հերիոթը երբեք չի հավակնել առաջինը լինելու դափնիներին: Գուցե պատճառն այն է, որ անգլիացին ավելի զգուշավո՞ր էր իտալացուց. ի տարբերություն Գալիլեյի, Հերիոթը չէր ձգտել հրապարակելու իր հայտնագործությունը:

Ո՞ւմ է պատկանում ապագան

Ո՞ւմ է պատկանում ապագան: Ֆրանսիացի գիտնականների կարծիքով՝ Աֆրիկային: Չէ՞ որ Աֆրիկան աշխարհի ամենաերիտասարդ մայրցամաքն է: Աֆրիկյան երկրներից շատերում բնակչության կեսից ավելին կազմում են երեխաներն ու դեռահասները: Մայրցամաքներից ոչ մեկում 15 տարեկանից փոքր այսքան մարդ չի ապրում: Ողջ աշխարհում բնակչության միջինը 30, 5 տոկոսը այսօր 15 տարեկանից փոքր է: Աշխարհի ամենատարեց տարածաշրջաններն են Չինաստանը, Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան և Ռուսաստանը:

Բացառիկ օրինակ կարելի է բերել Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանին, ում բազմաթիվ նախաձեռնություններից է նաև Վանաձոր քաղաքի Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ մայր եկեղեցու մերձակա հրապարակը «Սուրբ Թարգմանչոց» անունով կոչելու գաղափարը:

Առաջարկությունը լիովին բավարարվեց 2008 թվի դեկտեմբերին կայացած Վանաձորի ավագանու նիստի որոշմամբ և այն այժմ կրում է այդ անունը:

Սակայն անունը անուն, բայց այն պետք է խոսուն դարձնել դարերի համար և սերունդներ կրթել, և այս, ինչպես դուք եք նշում ձեր խոսքում, կհանդիսանա հոգևոր մի նոր ավիշ և կլիցքավորի հայի աստվածային նյութով լեցուն ոգին և կմաքրի նրա բարոյականությունը, նրան զերծ կպահի հոգեկործան վտանգներից և հոգևոր շփոթից:

- Հոգևոր, մշակութային, ազգային այս կոթողը Հայ Առաքելական եկեղեցու զավակների համար արդյո՞ք խորհուրդը չէ մաքրության, որ պղտորված չէ աշխարհիկ կյանքով: Արդյո՞ք այս հրապարակ-կոթողը դարպասը չի լինելու մաքրությամբ մուտք գործելու առաջնորդանիստ Սուրբ Նարեկացի Մայր եկեղեցի:

- Ինչպես նշեցի, թեմակալ սրբազան առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի մտահղացումն էր նաև հիմնավոր ու հարատև մնայուն մի կոթող ևս կառուցել «Սուրբ Թարգմանչոց» հրապարակում, որը և կմարմնավորեր դարերի խորհուրդը: Կոթողը պետք է կրի իր մեջ լինելիության գաղափարը, որի մեջ է գիտությունը, հավատքը և թագավորությունը:

Այս եռագագաթ ամրությամբ է պայմանավորված մեր ազգի ապագան ամբողջությամբ: Հետևաբար այս հուշակոթողի մեջ մտան մի քանի խորհրդանիշներ և անձանց արժաններ, ովքեր մեջք մեջքի տված ցույց են տալիս միասնականության և ազգային սրբությունների մեկ մեկից անքակտելիությունը:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցով ներկայացրել եմ հայ դպրոցն ու գիտությունը, ումով և ճանաչում ենք Բարձրյալին:

Սուրբ Սահակ Պարթև հայոց մեծագույն հայրապետի արձանով խորհրդանշում ենք հայոց անկոտրում հավատքը և հայ մշակույթը, որով կերտվում է հայ ինքնությունը:

Եվ Վռամշապուհ կամ պարզապես հայոց արքայական կերպարի արձանը ցույց է տալիս անկախ պետականության օրենսդրական հզորությունը: Նրանք նայում են հեռուն և յուրաքանչյուրը ստանձնում է իր բաժին պատասխանատվությունը Աստծո առաջ: Նրանց ձեռքին իրենց ժողովրդի իմաստուն հանճարն է, բազկի ուժն ու դարերի խոսքը, ապրելու վճռականությունը: Նրանց ոտքերի տակ հայրենի հողն է, ժայռացած մեկ ամբողջությամբ՝ Մեծ Հայքի քարտեզի նմանությամբ: Կոթողի կենտրոնական մասում վեր է խոյանում մեր իղձերի Տերունական հաղթական նշանը:

Սյան վրա բոլոր կողմերից փորագրված են հայոց 36 զինվորները, որոնք երբեք տանուլ չեն տալիս ոչ մի պատերազմում և քանի որ աստվածապարգև են, ապա ուրեմն նաև հարատև:

Կոթողը կարծես հրավիրում և պատմում է մեր մասին, այդ ոգով զորացնում ամեն այցելուի, որ կմտնի Աստծո տաճարը ավելի մեծ համոզումով և մաքրված:

Հուսանք, որ օրերից մի օր կսկսվի այդ կոթողի շինարարությունը և մեր քաղաքը կգեղեցկացնի ևս մեկ նմուշով, կդառնա մեր սիրելի Վանաձորի ապագայի խորհրդանիշը:

- Մի՞թե մեր ժամանակներում այս մտահղացումից ավելի աստվածահաճո առաքելություն կա, մտահղացում, որի իրականացումով էլ կամբողջանա առաջնորդանիստ սուրբ տաճարատան ճարտարապետական տեսքը: Ուշագրավը կլինի ոչ միայն կերպարների բնութագրային ընկալումը, այլև՝ պատկերները պատվանդանի հետ կապելու ամբողջական զգացումը:

Առաքելական եկեղեղեցու զավակներիս հոգևոր կամուջը կառուցողի ավյունով Ձեր մտահղացումները թող հաղթանակվեն նոր արարումներով ու արժանապատվությամբ փոխանցվեն սերունդներին:

Լեւոն ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վանաձոր-Կալուգա

ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Այս ժողովուրդը ունի չափազանց հին քաղաքակրթութիւն... Արարատը կը թուայ անսահմանօրէն հին եւ իմաստուն, ակամայ կը մտաբերես, որ անոր ոտքերուն տակ սկզբնաւորուած է մարդկային քաղաքակրթութիւնը ամենահին ժամանակներէն ի վեր, մարդկային առաջնակարգ քաղաքակրթութիւններէն մէկը, ինչպիսին գոյութիւն ունեցած չէ երկրագունդի վրայ»:

Անաթոլ Լունաչարսկի (1875-1933), ռուս պետական գործիչ, արուեստաբան

«Մենք հասկցանք, որ երկարամեայ անհաւասար պայքարը թուրք կեղեքիչներու եւ հայու միջեւ՝ մենատիրութեան, բարբարոսութեան պայքարն է ընդդէմ արդարութեան եւ ազատութեան ոգիին: Եւ երբ մենք տեսանք Թուրքիոյ այդ զոհը՝ մեզի հասած մարող աչքերով, որոնց մէջ անմար էր յոյսի շողը, ի վերջոյ հասկցանք, որ մեր այդ քոյրը կը մահանայ ճիշդ այն պատճառով, որովհետեւ ան մեր քոյրն է, եւ անոր մեղքը այն է, որ կը կիսէ մեր զգացումները, կը սիրէ ան, ինչ որ մենք կը սիրենք, կը հաւատայ այն բանին, ինչին մենք կը հաւատանք, եւ մեզի պէս կը գնահատէ իմաստութիւնը, արդարութիւնը, բանաստեղծութիւնը եւ արուեստը:

Այս է անոր անքաւելի յանցանքը»:

Անաթոլ Ֆրանս (1884-1924), ֆրանսացի գրող

«Հայաստանի անցեալը երկարատեւ տառապանքներու պատմութիւն մըն է: Բայց այդ հեռաւոր անցեալ է արդէն: Այժմ հայերը կը կառուցեն իրենց ապագայի հիմքը, եւ դուք պէտք է շարունակէք ու աւարտէք այդ հսկայական շինարարութիւնը: Ուրեմն՝ զինուեցէք արիութեամբ, անշահախնդրութեամբ, գիտելիքներով: Եւ կատարելով ստեղծագործական աշխատանքը յանուն ձեր ազգի բարեկեցութեան, յիշեցէք, որ դուք այդ բանը կ՛ընէք բոլոր ժողովուրդներու համար, եւ դուք այն միջազգային քաղաքացիներ էք, որու յաղթանակը կը թելադրէ ոչ միայն արդարութեան զգացումէն, այլեւ իւրաքանչիւր ազգի շահէն մեկնած»:

Ռոմէն Ռոլան

Մհեր Մկրտչյանի Փողոց Կտեղադրվի նաև Արձանը

Վանաձորցիներին վերադարձավ այն զգացումը, որ մեծանուն դերասան Մհեր Մկրտչյանը նորից իրենց հետ է: Նրանք չեն մոռացել, թե ինչպես էր սիրված դերասանը իր արվեստը մատուցում իբրև իր կյանքի արվեստ՝ հոգևոր փորձառությամբ իմաստավորված: Նա տալիս էր ամենաթանկը՝ հոգու սնունդը, որը շռայլորեն, անսակարկ բախշում էր բոլորին: Եթե գնահատել գիտես՝ վերցրու, վերցրու ամբողջ կյանքիդ համար:

Այսուհետ «Արցախ» պուրակին հարող փողոցը կկրի ԽՍՀՄ ժողովրդական արտիստի անունը, իսկ պուրակում կտեղադրվի արձանը: Կտեղադրվի հոգու թելադրանքով և կհարստացնի վանաձորյան մարդասիրական իդեալներին ու գաղափարներին նվիրված հարուստ կոթողների շարքը:

Նախաձեռնությունը «Հանուն Գուգարաց աշխարհի» բիկ-ի նախագահ Վահրամ Բաղդասարյանինն է: «Հանուն Գուգարաց աշխարհի» բիկ-ն դիմել էր համայնքի ավագանուն՝ «Արցախ» պուրակին հարող տարածքը մեծ դերասանի անունով կոչելու համար, և ավագանին միաձայն տվել է իր համաձայնությունը:

Լեւոն ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վանաձոր

Հովհաննես ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ի սկզբանե ... Լռություն էր



Գիշեր էր: Աստղազարդ երկինք: Լուսինը, ասես պահմտոցի խաղալով, սահում էր ծառերի սաղարթներին քսվելով: Ծղրիդները դեռ չէին արթնացել, սակայն ամառը վերջապես մեր քաղաք եկավ: Ու սրճարանը, որ քաղաքի կենտրոնում էր, մեկեն կենդանացավ:

Հաճախորդները վայելում էին ցերեկային տապից հետո իջնող-տարածվող զովը:

Սեղաններից մեկի մոտ նստած էր իմ վաղեմի ծանոթ նկարիչը՝ Նորայրը: Նա մենակ էր, ու դրանից, չգիտես ինչու, ես վատ զգացի:

- Օրը պիտի որ ուրախ լիներ, - բարևս առնելով նա միտքս կարդաց: - Բայց մի տեսակ անորոշ է ու տխուր…

- Ամեն ինչ բխում է հոգուց, սնվում է հոգուց: - Այնպես որ աշխարհին միայն գույներով նայելը դեռևս բավարար չէ, - փորձեցի կատակել: Միայնակությունն իրապես երբեմն հպարտ է լինում…

Նորայրի հետ նոր ծանոթներ չէինք, բայց այսպես՝ դեմդիմաց, երկար ժամանակ չէինք հանդիպել: Գիտեի, որ ընտանեկան ողբերգություն ունի և միայն սեղանի մոտ չէ, որ մենակ է: Ու մի ներքին ձայն ինձ հուշում էր, փորձիր երկար նստել-զրուցել: Դրանից ծանոթդ միայն շնորհակալ կլինի:

- Երկու շիշ գարեջուր, - պատվիրեց Նորայրը գեղեցկատես մատուցողուհուն:

Պատվիրեց այնպիսի նայվածքով, որ սիրուց ընդմիշտ բաժանվելու տպավորություն էր հիշեցնում:

- Մեծացանք բարեկամս:

- Հիսունն ինչ տարիք է. – ժպտացի: - Կյանքդ նոր-նոր է սկսվում: Եվ հետո՝ ամեն տարիքում էլ կարելի հետաքրքիր ապրել:

- Հետաքրքիր կարելի է , - օրորեց գլուխը: - Միայն թե մարդ երջանկություն է փնտրում, իսկ կյանքը նրան դժվարություններ է մատուցում: - Եկավ մի ժամանակ, երբ թվաց, ընդհուպ մոտեցել եմ ցանկություններիս: Մնում է ձեռքս երկարեմ, և դրանք իմը կլինեն, - դողդոջուն բոցը մոտեցրեց ծխախոտին, - հետո ամեն ինչ մեկեն անհետացավ:

- Ցանկություններին հասնելու ճանապարհին մի տարածություն պիտի թողնել, - ասացի: - Ցանկություններին ճիշտ չէ շնչափելու աստիճան մոտենալ:



Գծանկարը՝ Արսեն ՌԱՖԱԵԼՅԱՆԻ

- Այդ դեպքում ինչ է ստացվում. առաջ չգնալ, չձգտել: Իսկ եթե չձգտել, ապա մինչև որ սահմանը…

- Աստված գիտի…

- Աստված գիտի… Աստծո գործերին խառնվելը մեղք է: Բացի այդ, Աստծո գործն էլ հեշտ չէ. միլիոնավոր մարդիկ և… նույնքան անհատականություններ: Արի ու գլուխ հանիր:

- Միլիոնավոր անհատականություններ, - հաճույքով կում արի «Կիլիկիայի» սառնությունը: - Մեկ անհատն արդեն իսկ մի ամբողջ աշխարհ է, մի ամբողջ կյանք, միայն իրեն հատուկ գաղափարներով, դատողություններով: Ի դեպ ասեմ՝ դատողությունները սկսվում են կասկածից, զարմանքից: Ամեն անգամ մինչ քնելը գլուխս բարձին դնելուց հետո զարմանում էի. տեսնես ինչի եմ աղոթում.

Հիմա, որ ես պիտի պառկիմ,
Հիսուս, Քեզի աղոթք կընեմ,
Բոլոր մեղքերս Տեր ներե
Եվ այս գիշեր զիս պահե:
Թե որ նորեն ես չարթնանամ՝
Շնորհե ով Տեր՝ Քո քովդ գամ.
Ամեն…

- Մորս սովորեցրած աղոթքն է, - ասի: - Աղոթում էինք բոլորով՝ եղբայրներս, քույրս:

Երեխա էինք՝ մեղքերից հեռու մեղքերին անհաղորդ, բայց ներում էինք հայցում: Թե

➲17

ՄԵՋ ԾԱՆՈԹ-ԱՆԾԱՆՈԹ ԱՐԱԲԵՐԵՆԸ



Եթե, օրինակ, դուք գնում եք Ֆիրդուսի փողոց (հանրահայտ ֆիրդուսնոց)՝ առևտրի, դըժվար թե ձեր մտքով անցնի, որ ուղիղ դրախտ եք գնում (մեծ բանաստեղծի անունը թարգմանաբար նշանակում է դըրախտ): Կարևոր չէ՝ դրախտի **դուքաններից սաբուն** կգնեք, թե **թախթ**, կարևորը՝ **բախթը** ձեզ ուղեկցի, գնած ապրանքն էլ ոչ թե **շառով**, այլ **խերով** լինի: Այս նախադասության մեջ ընդգծված բոլոր բառերը փոխառություններ են արաբերենից:

Արաբերենը սեմական լեզվաընտանիքի ամենատարածված լեզուն է: Այս լեզվով աշխարհում խոսում է շուրջ 225 միլիոն մարդ: Արաբական երկրների համար ընդհանուր է միայն գրական արաբերենը. յուրաքանչյուր արաբախոս երկիր ունի սեփական բարբառը (բարբառներում տարբեր հնչյուններ տարբեր կերպ են արտասանվում: Ասենք՝ Եգիպտոսում «ջ» տառի փոխարեն ասում են «գ», իսկ Սիրիայում՝ «ժ»): Երբեմն բարբառներն իրարից այնքան են տարբերվում, որ մի երկրում բնակվող արաբը պարզապես չի կարողանում հաղորդակցվել մեկ այլ երկրում բնակվող արաբի հետ: Ուստի արաբերեն սովորողները նախևառաջ պետք է ուսումնասիրեն գրական արաբերենը տարբեր երկրներում բնակվող արաբների հետ շփվելու համար: Արաբական երկիր մեկնել ցանկացողներն արժե որ իմանան հետևյալը. եթե ցանկանաք մըզկիթ մտնել, ապա չմոռանաք հանել կոշիկները, հակառակ դեպքում կլսեք. «Հարա՛մ, հարա՛մ ալեյք», որ նշանակում է «Ամոթ քեզ»: Ու չզարմանաք, եթե ամեն քայլափոխի լսեք՝ «Ին շա Ալլահ»՝ «Եթե Աստված կամենա» կամ «Ալ-համդու լիլլա»՝ «Փառք Աստծու»: Եթե հակված չեք զուսպ, չափավոր ապրելակերպի, ապա խորհուրդ չենք տա արաբական երկրներ մեկնել Ռամադան ամսվա ընթացքում (զուգադիպում է հիմնականում ամռան վերջին, աշնան սկզբին): Ռամադանը արաբների, ինչպես և բոլոր մահմեդականների սրբազան ամիսն է, որի ընթացքում արևածագից մինչև մայրամուտ նրանք ո՛չ ուտում են, ո՛չ խմում, ո՛չ ծխում, խանութների մեծ մասն էլ պարզապես փակ է առավոտյան և ցերեկային ժամերին: Որոշ երկրներում ցանկալի է և նույնիսկ պարտադիր, որ դրսում ոգելից խմիչք չօգտագործեք, իսկ օգտագործելու դեպքում խմիչքի շիշն ամբողջությամբ ծածկեք սև տոպրակով: Արաբ վաճառականների հետ հարաբերություններում, իհարկե, պետք է ուշադիր լինել, ավելի ճիշտ, չկորցնել զգոնությունը, քանի որ արաբական երկրներում վաճառվող գրավիչ, աչք շոյող ապրանքները և վաճառականների՝ դարերից եկող փորձառությունը ձեզ կարող են բավական կարճ ժամանակահատվածում սնանկ դարձնել: Ու նաև աշխատեք քիչ խոսել կամ ընդհանրապես չխոսել քաղաքականության ու կրոնի թեմաներով, քանզի համեմատաբար խիստ ռեժիմ ունեցող երկրներում բնակչության մեծ մասը դե ֆակտո ազգային անվտանգության գործակալ է: Ընդհանուր առմամբ, արաբական երկրներում դժվարությունների շատ չեք հանդիպի. արաբներն այնքան հյուրընկալ են, որ պատրաստ են, օրինակ, օտարերկրացուն մի քանի հարյուր մետր ուղեկցել վերջինիս փնտրած վայրը ցույց տալու համար:

Միջնադարում արաբական արշավանքների հետևանքով արաբերենից հայերենին են անցել բազմաթիվ արաբերեն բառեր: Մի մասը դարերի ընթացքում դուրս է մղվել գործածությունից, մի մասը մինչև օրս էլ մենք գործածում ենք, երբեմն արտասանական որոշ փոփոխություններով, հաճախ չենթադրելով անգամ, թե դրանք բուն հայկական բառեր չեն: Ահա դրանցից մի քանիսը.

ադաթ - սովորույթներ
ազաբ - չամուսնացած
ազիզ - թանկագին
ալվան - գույներ
ահմախ - տխմար
ասկյար - զինվոր
բախթ - բախտ
բոստան - այգի
բատտ - բադ
բուրջ (բուրգ-եգիպտ.) - աշտարակ
դառբա - ուժեղ հարված (ունենք «դըրբ»՝ «զարկ» բառը)
դաֆթար - տետր
դուքան - կրպակ
թախթ - բազմոց
թամամ - լիարժեք
խաբար - լուր
խամ - անմշակ
խանչար - դաշույն
խառռատ - խառատ
խեր - բարիք
խիյար - վարունգ
խուրդա - մանր
կայֆ - թմրանյութ
հալ - վիճակ
հալվա - քաղցր
հայվան - կենդանի
հաշիշ - չոր խոտ
հարամ - ամոթ
հարիֆ - ընկեր, խաղընկեր
հիմար - էշ
ղալատ - սխալ
ղալմաղալ - ես խոսում եմ, դու խոսում ես (աղմուկ-աղաղակ)
մելիք - թագավոր
մեյդան - ասպարեզ
մեյմուն - կապիկ
մուրաբբա - մուրաբա
յանի - այսինքն
նախշ - նախշ
նաֆս - հոգի
շախռա (շուխուռ) - ուժեղ խռմփոց
շառ - չարիք
շիշ - սուսեր, շամփուր
շիրա - քաղցր հյութ, սիրոպ
ջազար (գազար) - գազար
ջահել - տհաս
ջարիմա - ջառմա, փորձանք
ջեյբ - գրպան
ջիհաննամ - դժոխք
սաաթ - ժամեր
սաբուն - օճառ
սահարա - անապատներ
սաղ - առողջ
վախտ - ժամանակ
վեզիր - նախարար
քյասիբ - մանր գործարար
քուրք - մուշտակ
ֆահմ - հասկանալը
ֆիրդուս - դրախտ

Ներկայացրեց Արսեն ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆԸ

16⊃

Ի սկզբանե ... լռություն էր

ինչու՝ հասու չէինք: Սակայն դրա փոխարեն քնում էինք անխռով: Տարիներ հետո, երբ հասակ առա, հասկացա՝ աղոթքը ոչ միայն մաքրվելու, այլև հոգու խորքը թափանցելու պես մի բան էր:

- Ամեն մարդու բան չէ, և դժվար է սեփական հոգու խորքը նայել, - չգիտես համաձայնեց, թե առարկեց Նորայրը: - Երբեմն քննում ես հոգիդ, համոզվում, որ բռնածդ ճամփան անթերի չէ, բայց միևնույնն է՝ շարունակում ես ընթացքդ:

- Ընթացքը մի դեպքում կոնկրետ է, - ասացի: - Մի այլ դեպքում՝ ժամ է, օր, տարի: Մի խոսքով՝ քայլ: Եվ վերջին քայլը տանում – հասցնում է ավարտին:

- Պատահում է ավարտն ավելի վաղ է գալիս, քան վերջին քայլը, - թեկուզ մոտ՝ Նորայրի աչքերի տամկությունը անհնար էր չզգալ: - Ասում են՝ աշխարհի սկզբում Բանն էր՝ Խոսքը: Բայց ինձ համար մինչև ամենաաստեղծ Խոսքը՝ Լռությունն էր: Մեծ Լռությունը: Լռությունից էլ ծնվեցին գույները որոնք իմ հոգու թարգմանը դարձան:

Առանց գույների, առանց վրձնի կյանքս չէի պատկերացնում: Նկարելն օդ շնչելու նման մի բան էր: Թվում է՝ երջանիկ լինելու համար ոչինչ չէր պակասում: Երկրաշարժից հետո, սակայն, ամեն ինչ ավերակվեց: Ավերակվեց ներաշխարհս, ու ինձնից անկախ, սկսեցի ստեղծագործել աստվածաշնչյան թեմաներով՝ «Դրախտից վտարումը», «Սկիզբը և վերջը», «Հիսուսի վերադարձը»… Վերջին կտավում խոշոր պլանով վազող մարդ էր՝ ձեռքին աղավնի: Աստծո աչքին ասես հենված՝ գլոբուս, վերևում՝ թևածող աղավնիներ: Դրանք խորհըրդանշում էին աշխարհի փրկությունը: Հավատացած էի՝ Փրկիչը գալիս էր: Բայց մի առավոտ, երբ վերջին վրձնահարվածներն ուր որ է պիտի ամբողջացնեին նկարը, մի Ձայն ասես հրամայելու պես հուշեց.

- Ոչնչացրու կտավը…

- Ինչու, - փորձեցի ընդդիմանալ…

- Գույները ճիշտ չես ընտրել, - ձայնը առարկություն ընդունելու մտադրություն չուներ: - Փրկության ձայնը կապույտն է, իսկ դու կարմիրն ես ընտրել…

- Ձայնը երևի սխալ չի եղել, - փորձեցի կարծիքս հայտնել, գույների մասին զգացողությունս ու իմացություններիս շրջանակը լայն չէր:

- Սխալ չէր: Բայց Ձայնին հետևելու բոլոր ջանքերս ապարդյուն էին. վրձինը պարզապես չէր ուզում ենթարկվել: Ասես անցյալի վերհուշի պարտադրանքով ձեռքի մատները փակեց Նորայրը:Ժամ-ժամի վրձնի գոյությունը սկսեցի մոռանալ: Իսկ Ձայնը շարունակում էր պարտադրել. «Այրիր կտավներդ»: Մի օր էլ երբ սթափվեցի՝ նկարներից միայն մոխիրն էր մնացել…

Գիշեր էր: Աստղազարդ երկինք: Լուսինը, ասես պահմտոցի խաղալով, սահում էր ծառերի բարձր սաղարթներին քսվելով: Ծղրիդների երգը դեռ չկար, բայց ամառը վերջապես մեր քաղաք էր եկել: Սրճարանը լեցուն էր հաճախորդներով: Սեղաններից մեկի մոտ միայնակ նկարիչ ընկերս էր ու ես: Ու մեկ էլ … լռությունը: Մեծ լռությունը…

2010 Թ. ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ԴՊՐՈՑԸ ԿՆՇԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

Լոռու մարզի Մարգահովիտ գյուղում դպրության սկզբնավորման եւ դպրանոցի հիմնադրման մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 5-րդ դարին: Ըստ ավանդության՝ հենց 5-րդ դարում, գյուղից 2 կմ հարավ-արեւմուտք գտնվող գյուղատեղիում դպրանոց է հիմնադրել Մեսրոպ Մաշտոցը: Հայերենի այբուբենը ստեղծելուց հետո Մաշտոցին հրավիրում են Վրաստան՝ օգնելու ստեղծել վրացական տառերը: Ներկայիս Մարգահովիտի մատույցներով անցնելիս Մաշտոցը ձմռան եւ ձյան պատճառով չկարողանալով շարունակել ճանապարհը, ստիպված ապաստանում է այստեղ: Այբասան (այբ ասող) անունը բնակատեղը ստանում է հայոց Առաջին ուսուցչի՝ այստեղ դպրանոց հիմնելուց եւ տեղի մանուկներին այբուբենը ուսուցանելուց հետո: Սա ավանդապատում է, բայց չի կարելի ասել, թե սոսկ լեգենդ է:

Այսօր,Մաշտոցիցուհայդպրությանհիմնադրումից տասնյակ դարեր անց, Հայաստանի Հանրապետության հատկապես գյուղական վայրերում ցավալիորեն քիչ են անընդհատ կենսագրություն ունեցող դպրոցները: Մարգահովիտի դպրոցը այդ քիչ երջանիկներից է եւ 2010-ին տոնելու է հիմնադրման 150-ամյակը: Մարգահովիտի դպրոցի հիմնադրման մասին հիշատակում կա Հայաստանի ազգային արխիվում. ֆոնդ 7, ցուցակ 1, գործ 156, ֆոնդ 48, ցուցակ 1, գործ 430: «Փաստաթղթին ծանոթացել եմ, ես կասեի՝ երջանիկ պատահականությամբ», - պատմում է գյուղի երկրագիտական թանգարանի հիմնադիր Ավագ Խառատյանը, ով գյուղի պատմությունն ամբողջացնելու նպատակով վերջերս հաճախ է լինում Հայաստանի ազգային արխիվում:

Մեկուկեսդարյա հոբելյանին պատրաստվող դպրոցի տնօրեն Աշոտ Անտինյանը վստահ է, որ 150 տարիները «հպարտություն են ներշնչում, միեւնույն ժամանակ՝ մեծ պատասխանատվություն ենթադրելով»:

Դպրոցն այժմ 411 աշակերտ ունի: Տնօրենի խոսքով, Մարգահովիտի դպրոցը բոլոր ժամանակներում էլ ունեցել է արժանի շրջանավարտներ, որոնց անուններն այսօր էլ հանրապետության շատ ու շատ վայրերում հպարտությամբ է տալիս յուրաքանչյուր մարգահովիտցի: «Իմ ուսերին պատասխանատվության մեծ բեռ է: Ինձ վստահել են այն դպրոցի տնօրինությունը, որտեղ ստացել եմ իմ մկրտությունը», - ասում է տնօրենը, ում գրեթե ողջ գիտակցական կյանքը կապված է այս հաստատության հետ:

150-ամյա կրթօջախը այսօր էլ հաջողություններ է արձանագրում. 2004 թ. դպրոցը լավագույնն էր մարզում, 2001-ին Աշոտ Անտինյանը ճանաչվել է Լոռու մարզի տարվա լավագույն տնօրեն, 2009-ին՝ Լոռու մարզի տարվա լավագույն ուսուցիչ, դպրոցը պարգեւատրվել էբազմաթիվ պատվոգրերով եւ շնորհակալագրերով, 2004 թվականին՝ ՀՀ նախագահի շնորհակալագրով: Վերջերս կազմակերպված միջդպրոցական հրաձգության մրցույթում էլ զինղեկ Քոչար Քոչարյանի գլխավորությամբ՝ դպրոցի թիմը երկրորդն էր:

Տնօրենը նկատեց, որ այս նվաճումները ուսուցիչների վաստակն է, ովքեր «հմուտ ու բանիմաց մանկավարժներ էին, կյանքի ճիշտ ուղին մատնանշող: Դպրոցի այսօրվա հաջողությունների համար ես պարտական եմ իմ աշխատանքային ընկերներին, առանց նրանց աջակցության՝ քիչ բան կարելի էր անել: Լավ կառավարումն ու տնօրինումը առանց հմուտ աշխատակազմի՝ հնարավոր չէ: Դրանք փոխկապակցված են: Դպրոցի հաջողություններում ոչ պակաս կարեւոր դեր ունեն աշակերտներն ու նրանց ծնողները, ովքեր անչափ հոգատար եւ ուշադիր են դպրոցում կատարվող ամեն ինչի նկատմամբ, իրենցն են համարում թե՛ հաջողությունները՝ դրանց համար անթաքույց ուրախանալով, թե՛ խնդիրները՝ դրանց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքներին սատար կանգնելով»:

1998 թվականին կառուցվել է դպրոցի նոր մասնաշենքը, 2000 թվականին ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի եւ հոլանդական կառավարության ֆինանսական աջակցությամբ հիմնանորոգվել է դպրոցի հիմնական մասնաշենքը: Դպրոցը գազիֆիկացված է, ունի լոկալ ջեռուցման ցանց: Գործում են ֆիզիկայի եւ քիմիայի լաբորատորիաներ, ժամանակակից չափանիշներին համապատասխան համակարգչային կենտրոն, ռազմագիտության, աշխարհագրության եւ կենսաբանության կաբինետներ, ու որպես արդյունք՝ առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մարգահովիտցի մասնակիցները տուն են վերադառնում գովասանագրերով ու դիպլոմներով:

Մարգահովիտի դպրոցը նաեւ խնդիրներ ունի: Արհեստանոցում աշխատանքի ուսուցման դասերն անցնում են ԽՍՀՄ ժամանակ ստացած հաստոցների առջեւ, հաստոցների մի մասն արդեն շարքից դուրս է եկել, որոշներն էլ՝ կիսափչացած են:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացող, հարափոփոխ ժամանակաշրջանում հարկ է անընդհատ նոր սարքավորումներով համալրել դպրոցի համակարգչային կենտրոնը, լաբորատորիաները, աշխարհագրության, կենսաբանության, ռազմագիտության կաբինետները, սակայն ֆինանսական միջոցներն այնքան քիչ են, որ դպրոցը դրանք չի կարող ձեռք բերել: Փորձում ենք ժամանակից հետ չմնալու համար ձեռք բերել գոնե անհրաժեշտ նվազագույնը, սակայն դա քիչ է», - նկատեց Աշոտ Անտինյանը: Նա հուսով է, որ արտերկրում ապրող համագյուղացիները կանեն ամեն ինչ, որպեսզի 150-ամյակը տոնելիս դպրոցում լուծված լինի վերոնշյալ խնդիրների գոնե որոշ մասը:

Տնօրենը մտահոգված է նաեւ դպրոցի հետագա ճակատագրով: «Կրթօջախը, որ տասնամյակներ շարունակ եղել է նախկին Գուգարքի շրջանի, իսկ այժմ՝ Լոռու մարզի լավագույն դպրոցներից մեկը, ապագայում կարող է դառնալ զուտ ատեստատ տվող հաստատություն», - տարակուսում է մեր զրուցակիցը եւ առաջարկում. «Համեմատաբար խոշոր գյուղական՝ համայնքներում բացել ավագ դպրոցներ՝ դասարանների ցածր խտությամբ՝ միջինը 5-10 աշակերտ, առաջարկվող 12-15-ի փոխարեն: Նաեւ գյուղին կամ միջնակարգ դպրոցին պետք է սեփական տրանսպորտային միջոցն ունենալու հնարավորություն տալ: Տարբեր վարկային ծրագրեր են իրականացվում այս ոլորտում, թող դրանցից մեկով տրամադրվի նաեւ փոխադրամիջոց»:

Ճգնաժամն էլ նոր խնդիրներ է բերում, չի բացառվում, որ 2010-ին դպրոցը պահպանման ծախսերի համար այս տարվանից քիչ գումար ստանա: Թեեւ կուտակված պրոբլեմներին, տնօրենը լավատես է եւ ասում է, որ խնդիրները լուծելի են, կարեւորը դպրոցում հայ ոգին պահպանելն է: «Մեր ժողովուրդն՝ ավելի ծանր ժամանակներ է ապրել՝ երկրաշարժ, պատերազմ, սով, ցուրտ, բայց կարողացել է հաղթահարել դրանք՝ մեծապես շնորհիվ հենց աննկուն ոգու, որի պահպանության համար այսօր էլ ամեն ինչ արվում է դպրոցում», - հավաստիացնում է Մարգահովիտի դպրոցի տնօրեն Աշոտ Անտինյանը:

Յովհաննես ՍԱՐԴԱՐՅԱՆ

ՕՏԱՐՆԵՐԸ ՅԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՅԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Այսքան փորձութիւն ու տառապանք ունեցած ժողովուրդի մը անվայել է անգիտանալ իր կեանքը, տարուբերուիլ ժամանակի ալեկոծութեան քմահաճոյքին անձնատուր:

Յայը...

Ազգ մը, որ կարողացած է պաշտպանել իր անհատականութիւնը՝ սկսած Նեբրովքի եւ Շամիրամի ժամանակէն մինչեւ մեր օրերը, որ կարողացած է պահպանել իր տիպը, իր սովորութիւնները, իր լեզուն, իր կրօնը, չնայած որ ոչ մէկ ժողովուրդ չէ ենթարկուած այնքան տառապանքներու, որքան Յայկայ սերունդը, այդպիսի ազգմը չի կրնար մոռցուիլ պատմութեան էջերուն մէջ: Գոյութեան կռուի տեսակէտէն զարմացումի եւ ապշութեան արժանի են տոկունութիւնը եւ յարատեւութիւնը այդ փոքրիկ ազգի, որ ամբողջ տասնեակ դարերու ընթացքին անընդհատ շրջապատուած եղած է հզօր պետութիւններով: Եւ մինչդեռ կործանեցան մեծ Ասորեստանը եւ Բաբելոնը, Պարսիկներու, Պարթեւներու, Մակեդոնացիներու, Յռոմէացիներու, Արաբներու եւ Մոնկոլներու զօրաւոր իշխանութիւնները, մինչդեռ բնաջինջ եղան եւ անյայտացան աշխարհի երեսէն Քաղդէացիներու, Պոնտացիներու եւ Պարթեւներու նման հզօր ժողովուրդները, սակայն Յայկական փոքրիկ ազգը ոչ միայն մնաց կենդանի, այլեւ դեռեւս լի է կեանքով եւ յոյսով, կը պապակի գիտութեան ծարաւով, կը վառուի գործունէութեան եւ աշխատութեան սիրով, կը դիմէ անդադար դէպի յառաջ...»:

Վ. Ելիսիեւ, Կայսերական Ռուսաստանի աշխարհագրական ընկերութեան 1887թ. մարտ 4-ի ժողովին կարդացուած զեկուցումէն

ԻՄ ԿՅԱՆՔԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՎՈՏԸ

Ճանաչված ու սիրված երգիչ Արամեի հետ զրույցն ուզում եմ սկսել մի հետաքրքիր պատմությամբ, որը նա պատմեց մեր հարցազրույցն սկսելուց առաջ. «Մի անգամ մի աղջիկ էր եկել ինձանից հարցազրույց վերցնելու: Ամեն ինչ անցավ սովորականի պես…հարցեր, պատասխաններ: Հետո նա անհետացավ, իսկ հարցազրույցն այդպես էլ չտպագրվեց: Որոշ ժամանակ անց իմացա, որ այդ «ներկայացումն» ընդամենը պատրվակ էր ինձ հանդիպելու համար...»: Կարծում եմ, սա միակ խենթությունը չէ, որ Արամեին մատուցել /ու շարունակելու են մատուցել/ են իր երկրպագուները: Յուրաքանչյուր խենթ արարք, անակնկալ վերաբերմունք ապացույցն է այն բանի, որ սիրում են ու գնահատում այն արվեստը, որ Արամեն մատուցում է իր հանդիսատեսին: Այս ամենն Արամեի ներկան է, իսկ անցյա՞լը.

- Արամե, ունեք իրավաբանի մասնագիտություն, ի՞նչ է, երգչի կարիերան իրատեսական չէր Ձեզ համար:

- Շատ բան եմ փորձել, ուսանել եմ նաև իրավաբանություն, բայց ի վերջո հասկացա, որ երգն է իմ ուղին: Հասկացա, որ երաժշտության միջոցով միայն կարող եմ ինքնաարտահայտվել ու տալ մարդկանց այն, ինչ կարող եմ: Երաժշտությամբ զբաղվել եմ դպրոցական տարիներից, երբ ընտանիքս տեղափոխվեց Դոնի Ռոստով: Երաժշտության ուսուցչուհուս խորհրդով երգել եմ «Արևիկ» խմբում: Երբ տեղափոխվեցի Հայաստան, մոտ մեկ տարի ուսումնասիրում էի երաժշության ասպարեզը: Հետո առաջին ձայնագրություն, տեսահոլովակ, առաջին համերգ, ձայներիզ…

- Այդ ամենն արդյունքն է նաև այն մարդ-





կանց ջանքերի, ովքեր աշխատել ու աշխատում են Ձեզ հետ:

- Միայնակ ոչնչի հասնել չես կարող: Ուրախ եմ, որ շրջապատված եմ պրոֆեսիոնալ մարդկանցով: Մեկտեղելով մեր ուժերն ստեղծել ենք համերաշխ թիմ, որտեղ յուրաքանչյուրը կատարում է իր աշխատանքը: Ես հաշվի եմ առնում նրանց կարծիքը, բայց աշխատում եմ չդավաճանել իմ սկզբունքներին: Երբեք նորաձևության հետևից չեմ ընկնում, ամեն ինչ պետք է բնական լինի, արհեստական ոչինչ չեմ սիրում: Իհարկե միշտ նույն կերպարում չեմ կարող մնալ: Տարիներ են անցնում, ես հասունանում եմ, փոխվում, բնականաբար այդ ամենը պիտի անդրադառնա իմ կերպարի, արտաքինի վրա:

- Այդ ամենը մեծ ջանք է պահանջում: Ինչպե՞ս եք կարողանում հաղթահարել:

- Ինչքան էլ խոսեմ, պատմեմ, հնարավոր չէ պատկերացնել բոլոր այն դժվարությունները, խոչընդոտները, որոնք ստիպված ես հաղթահարել, որ հանդիսատեսին ներկայանաս այնպիսին, ինչպիսին նա է ուզում քեզ տեսնել: Երբեմն ասում եմ վերջ, պետք է կանգ առնել: Բայց դրանք ընդամենը հուսահատության փոքրիկ պահեր են: Հետո ինքս ինձ ասում եմ, Արամե, չէ՞ որ մի քանի տարի առաջ այս պահի մասին էիր երազում: Իսկ երբ բեմում զգում եմ երկրպագուների ջերմ վերաբերմունքը, տեսնում նրանց ժպտացող աչքերը, մոռանում եմ բոլոր դժվարություններն ու «վայելում» հաջողության պտուղները:

- Արամե, Ձեր համերգներին շատ են փոքրիկ երկրպագուները: Նրանք Ձեզ շատ սիրում են, ինչո՞վ կբացատրեք դա:

- Դժվարանում եմ պատասխանել, բայց ուրախ եմ, որ իմ երգերը նրանց հուզում են: Երեխաներին չես կարող խաբել, որքան անկեղծ են նրանք, այնքան անկեղծ ու անկաշառ էլ նրաց վերաբերմունքն է: Տարածված մեթոդ է, երբ որևէ ֆիլմ, տեսահոլովակ են նկարահանում, նախ ցուցադրում են փոքրիկներին: Եթե նրանց հավանությանն արժանացավ, ուրեմն հաջողությունն անխուսափելի է:

- Արամե, թվում է, թե Ձեր կյանքում ամեն ինչ հարթ է: Ունեք բարեկեցիկ կյանք, Ձեր երկրպագուները Ձեզ անչափ սիրում են: Այդ ամենը բավարա՞ր է երջանիկ լինելու համար, թե ամեն ինչ թվացյալ է:

- Իհարկե թվացյալ է: Լիարժեք երջանկություն չի լինում, լինում են միայն երջանիկ պահեր: Աստված ինչքան տալիս է, այնքան էլ վերցնում է: Արվեստի մարդիկ միշտ էլ ունենում են բարդ, խոչընդոտներով լի ուղի: Նրանք միշտ ապրում են ինչ-որ բանից կախված…: Բայց դա իմ ընտրած ուղին է ու չեմ բողոքում:

- Դուք շատ դրական լիցքեր եք փոխանցում Ձեր հանդիսատեսին: Իսկ իրական կյանքում ինչպիսի՞ն եք:

- Ճիշտ է բավականին շատ էներգիա եմ ծախսում, բայց դա անում եմ իմ երկրպագուների համար: Ես ուրախ եմ, որ ունեմ լավ ընտանիք, լավ ընկերներ: Նրանք միշտ իմ կողքին են, նրանք ինձ սիրում են: Ես հանգիստ, իրատես մարդ եմ, չեմ սիրում մարդաշատ վայրեր: Երբ հոգնում եմ, զգում եմ, որ էլ չեմ դիմանում, գնում եմ տատիկիս տուն, շրջապատում ինձ հարազատ, սիրելի մարդկանցով: Ես ստեղնետ /չուքա/ ձուկ շատ եմ սիրում: Տատիկիս տանը հաճախակի կազմակերպում եմ այսպես ասած «ստեղնետ հավաքույթներ»: Այդ ամենն ինձ ուժ է տալիս, օգնում վերադառնալ մի աշխարհ, որը շատ տարբեր է իմ իրական կյանքից, իմ իրական աշխարհից:

- Իսկ արտերկրում մենահամերգներ սպասվու՞մ են:

- Պլաններ կան, բայց առաժմ չեմ ուզում այդ մասին խոսել:

- Արամե, Ձեր երկրպագուները շատ կցանկանան Ձեզ տեսնել Եվրատեսիլի բեմում: Դա նաև կօգնի Ձեզ միջազգային ասպարեզ դուրս գալ: Ե՞րբ սպասենք Ձեզ Եվրատեսիլում:

- Ես հիմա էլ պատրաստ եմ մասնակցել, բայց կգնամ այն ժամանակ, երբ պահը հասունանա, երբ ասեն, որ ցանկանում են, որ հենց ես ներկայացնեմ Հայաստանը: Իսկ թե դա երբ կլինի, չեմ կարող ասել: Միաժամանակ չեմ ցանկանում հայտնվել նախաեվրատեսիլյան իրարանցման կենտրոնում:

- Վերջում ի՞նչ կմաղթեք Ձեր երկրպագուներին:

- Կմաղթեմ, որ նրանք առողջ լինեն և ապրեն այնտեղ, որտեղ իրենց լավ են զգում:

Նարինե ՇԱՄՈՒՄՅԱՆ

Արա ՊԱՊՅԱՆ

ԳԵՌԼԱՅԻ ՀԱՅԵՐԸ

(Անձնական դիտարկումներ, 1997 թ.)

Ներկայացվող նյութը չի հավակնում լինել գիտական ուսումնասիրություն: Հոդվածի մեջ, որոշակի պատմական հենքի վրա, արտացոլված են 1997 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ներկայիս Ռումինիայի Գեռլա քաղաք կատարած իմ երկու այցերի և հանդիպումների դիտարկումները:

1995 թ. նոյեմբերից մինչև 1997 թ. սեպտեմբեր դիվանագիտական ծառայության մեջ եմ եղել Բուխարեստի Հայաստանի Հանրապետության դեսպանատանը նախ՝ որպես առաջին քարտուղար, ապա նաև՝ որպես գործերի ժամանակավոր հավատարմատար (charge d'affaires ad interim): 1997 թ. օգոստոսի սկզբին դեսպանությունը տեղեկացվեց, որ հունգարահայերը ցանկություն են հայտնել հանդիպելու ռումինահայ համայնքի ներկայացուցիչների հետ և որպես հանդիպման վայր են առաջարկում Գեռլա քաղաքը: Քաղաքի ընտրությունը պատահական չէր: Գեռլան տեղակայված է Բուխարեստից Բուդապեշտ տանող կիսաճամփին: Սակայն ընտրության ամենակարևոր գործոնը բուն քաղաքի կարևորությունն էր երկու համայնքների համար: Քաղաքը 1920 թվականից, բացի մի կարճ ժամանակահատվածի՝ 1940-44 թթ., գտնվում է Ռումինիայի կազմում, սակայն այն առնվազն մի քանի դար եղել է Ավստրո-Հունգարիայի կազմում և հանդիսացել է Տրանսիլվանիայի հայության կենտրոնը: Գեռլան մինչև 1920 թ. կոչվել է Արմենոպոլիս (հայերեն՝ Հայաքաղաք, հունգարերեն՝ Szamosújvár or Örményváros, գերմաներեն՝ Armenierstadt):

Լուրն առնելուց դիմեցի Ռումինիայի խորհրդարանի անդամ, Մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի նախագահ Վարուժան Փամբուկչյանին: Նա սիրով համաձայնեց միասին այցելել Տրանսիլվանիա: Մեզ միացան նաև Ռումինիայում հայտնի գործարար Ժիրայր Գյուլբենկյանը և էլի մեկ-երկու հոգի:

Ներկայիս Ռումինիայի տարածքում հայերը զանգվածաբար բնակություն են հաստատել 14-15-րդ դարերից: Արդեն 1415 թ. հայերը Սուչավայում (Մոլդովայի սահմանի մոտ) Զամկա անունով վանք ունեին: Նույն վայրերում հայերը 1512 թ. կառուցել են Հաճկատար վանքը: Անվանումը ստուգաբանվում է որպես հաճույքը, ցանկությունը, ուխտը կատարող վանք: Առ այսօր այն մեծ ուխտատեղի է նաև ռումինացիների համար: Քանի որ վանքը հայկական է, ռումինացիները հավատում են, որ եթե վանքում դիպչեն հայերին, ապա նրանց ուխտը կկատարվի: Իմ այցերից մեկի ժամանակ, երբ քայլում էինք դեպի վանք, ռումինացի կանայք իրենց գլխաշորերն էին նետում մեր ոտքերի առաջ: Բնազդաբար մենք խուսափում էինք գլխաշորերը տրորելուց: Մեզ բացատրեցին, որ գլխաշորերը նետված են, որ քայլենք գլխաշորերի վրայով: Ռումինացիները հավատում են, որ այս ձևով հաղորդակից կլինեն հայերի հաջողությանը: Սա դարեր շարունակ ռումինացիների մեջ տարածված ավանդույթ ու հավատալիք է, քանի որ, թեև այդ վայրերում արդեն հայեր չկան, այնուհանդերձ, նրանք հիշվում են որպես մեծահարուստ և հաջողակ առևտրականներ:

Հենց այս վայրերից էլ հայերը 17–րդ դարից սկսած արտագաղթել են Տրանսիլվանիա: 1672 թ. թուրքերը ներխուժել են Մոլդովա, 1683 թ. գրավել Զամկա վանքը: Խուսափելով թուրքերից՝ հայերն անցել են ավելի ապահով վայր՝ Հաբսբուրգների տիրապետության տակ գտնվող Տրանսիլվանիա: Հիշեցնենք, որ հայերը Մոլդովայում էին հայտնվել Ղրիմից՝ դարձյալ խուսափելով թուրքական վայրագ տիրապետությունից: Ընդհանրապես, ըստ տեղի հայերի մեջ տարածված ավանդության, հայերի այդ հատվածը Հայաստանից արտագաղթել է 11-րդ դարում, Անիից:

Մոլդովայից հեռացած հայերը (մոտ երեք հազար ընտանիք) 1702 թ. Հաբսբուրգներից տեղափոխվել են Գեռլա բնակավայր և հիմնել Արմենոպոլիս քաղաքը: Եթե Մոլդովայի հայերը առաքելական էին, ապա Գեռլայում հաստատվելուց հետո նրանք դառնում են կաթոլիկ: Կարելի է ենթադրել, որ դա Տրանսիլվանիայում հաստատվելու թույլտվության նախապայմաններից էր: Արմենոպոլսի հայոց առաջին եպիսկոպոս է դառնում Օշենտիոս Վըրզարյանը (Auxențiu Vărzărescu, 1655, Բոտոշանի – 1715, Վիեննա): Մի քանի տասնամյակ տևած շինարարությունից հետո 1792 թ. օծվում է հայոց Սուրբ Երրորդություն եկեղեցին:

Եկեղեցին մշտապես գործել է նաև կոմունիստների ողջ տիրապետության ընթացքում:

Իմ այցի ժամանակ եկեղեցում ժամերգություն էր ընթանում, բնականաբար, լատիներեն և հունգարերեն: Սուրբ Երրորդություն եկեղեցին գտնվում է Գեռլա քաղաքի կենտրոնական հրապարակի վրա: Այն շրջապատված է 18-19-րդ դարերի երկհարկանի տներով, այդ թվում նաև հայոց առաջնորդարանով՝ կառուցված 1761 թ.: Ե՛վ եկեղեցին, և՛ առաջնորդարանը լեցուն են զանազան հնատիպ, բազմալեզու գրքերով և փաստաթղթերով: Առաջնորդարանն ունի կամարակապ ներքին բակ: Ամենահետաքրքրականն առաջնորդների յուղաներկ նկարների պատկերաշարն է: Ամենահին կտավներում պատկերված առաջնորդները մորուքավոր ու վեղարավոր են, նորերն՝ ավելի շեկ ու անմորուս:



Գեռլայի հայոց առաջնորդն իր համայնքի երկու անդամի հետ (1997թ.)

Հայկականության միակ ցուցիչը երկու խորանների առկայությունն է՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի և Սբ. Հռիփսիմեաց: Եկեղեցին բազիլիկ կառույց է: Զանգակատունն ունի 8-10 հարկանի շենքի բարձրություն: Բուն եկեղեցին շատ մեծ է և տպավորիչ: Իմ տեսած ամենամեծ հայկական եկեղեցին է: Եկեղեցու տակ կատակոմբեր են, ուր ավելի քան հարյուր տարի իրականացվել են թաղումներ: Թաղումները ոչ ավանդական ձևի են, այսինքն՝ դագաղները տեղադրված են պատերի մեջ՝ 4-5 շարքով: Թեև, ըստ ինձ ուղեկցողների, բոլոր թաղվածները հայեր էին, սակայն արձանագրությունները լատինատառ էին, անունները՝ հունգարական: Մեկ-երկու անուն կար, որոնցից կարելի էր կռահել դրանց հայկական ծագման մասին:

Եկեղեցու ներսում՝ հյուսիսային խորանի մոտ, կար մի հսկայական, դատարկ շրջանակ: Պարզվեց, որ Ռուբենսի նկարի շրջանակն է: Բուն նկարն այդ ժամանակ գտնվում էր Կլուժի պատկերասրահում: Նկարի պատմությունը հետաքրքրական է: Արմենոպոլսի հայերը ժամանակին պարտքով մեծ գումար են տվել Ավստրո-Հունգարիայի կայսրերին: Վերջիններս, չկարողանալով վերադարձնել պարտքը, որպես հատուցում 19–րդ դարի սկզբին հայերին առաջարկել են Ռուբենսի նկարը: Քանի որ Ռումինիայում օրենք էր ընդունված կոմունիստների կողմից անօրինականորեն բռնագրավված գույքի վերադարձի մասին, հորդորեցի հայերին անպայմանորեն պայքարել նկարի վերադարձի համար: Բուխարեստ վերադառնալուց հետո նկարի մասին պատմեցի ազդեցիկ հայերին և պաշտոնական գրությամբ

դիմեցի Ռումինիայի մշակույթի նախարարությանը: Հետագայում գոհունակությամբ իմացա, որ նկարը վերադարձվել է հայկական եկեղեցուն, և ներկայումս այն զրավել է իր դատարկ շրջանակը Սուրբ Երրորդություն եկեղեցում:

Գեռլա քաղաքի շրջակայքում կա նաև ավանդական հայկական գերեզման: Այստեղ թաղված են Եղեռնից փրկված հայերը, և տապանաքարերի վրա կարելի է հանդիպել հայերեն գրությունների ու բազմաթիվ հայկական ազգանունների: Գերեզմանն ունի մատուռ: Ընդհանրապես, Գեռլայում կա երեք հայկական եկեղեցի:

Գեռլայի շատ շենքեր մինչև հիմա ունեն հայերեն արձանագրություններ: Քաղաքում գործում էին «Արարատ» կազինոն, «Երևան» ավտոսպասարկման կենտրոնը: Քաղաքի բնակչությունը մոտավորապես 25 հազար է: Թեև պաշտոնապես քաղաքում ապրում է ընդամենը մի քանի տասնյակ հայ, այնուամենայնիվ, բնակչության առնվազն կեսը հավաստացած է, որ ունի հայկական ծագում: Հիշարժան է, որ տեղացի հայերը մեծ ակնածանք ունեն, իրենց խոսքով, «իսկական հայերի» նկատմամբ: Երբ փողոցում կանգնած զրուցում էինք Վարուժան Փամբուկչյանի հետ, մեզ մոտեցավ մի ծեր կին և ներկայացավ որպես տեղացի հայ: Ասաց, որ իր նախնիները Հայաստանում ապրել են «ծովի ափին»: Իմանալով, որ ես Հայաստանից եմ, սկսեց ձեռքով շոշափել ինձ՝ ասելով, որ ինքը «մինչև հիմա չէր տեսել իսկական հայի»:

Հետաքրքրական է, որ Գեռլայի հայերը մի ճաշ են եփում, որը կոչում են «ականջապուր», սակայն չեն հասկանում այդ բառի իմաստը:

Թեև Տրանսիլվանիայի հայերն ավելի քան ինը հարյուր տարի առաջ են արտագաղթել Հայաստանից, ներկայումս ունեն հունգարական անուններ, հայախոս չեն և կաթոլիկ են (չեն պատկանում Հայ Կաթողիկե համայնքին), այսուհանդերձ, անբացատրելի մի ուժ նրանց մեջ պահել է որոշակի հայկականության գիտակցություն: Գեռլայի հայերի միության նախագահ Յան Էսցեգարի (Janos Esztegar) հետ գնացել էի Գեռլայի քաղաքապետի մոտ: Էսցեգարը խոսում էր քաղաքապետի հետ և ասում էր «մենք՝ հայերս», ու ես չէի կարողանում հասկանալ՝ ի՞նչն է նրան հայ պահում:

Կարծում եմ, որ առաջին գործոնը հայ լինելու հպարտությունն է: Հայերը դարեր շարունակ այնքան ազդեցիկ ու հարգված են եղել, որ ներկայումս էլ այդ տարածաշրջանում հայ լինելն ընկալվում է որպես պատկանելություն որոշակի ընտրյալ խավի: Երկրորդ գործոնը Ռումինիայի պաշտոնական քաղաքականությունն է: Ցանկանալով թուլացնել հունգարացիների ազդեցությունը նախկին Տրանսիլվանիայի վրա՝ ռումինական պետությունը խրախուսում է հունգարախոս և կաթոլիկ հոծ զանգվածի մեջ (1,8 մլն մարդ) ճեղքերի առաջացումը և ազգային խմբերի վերադարձը արմատներին: Երրորդ գործոնը հայոց պետականության առկայությունն է: Ինչպես ասաց Գեռլայի հայերից մեկը. «Ես հիմա նայում եմ քարտեզին, կարդում եմ Հայաստան անունը և գիտեմ, որ Հայաստանը կա»:

Առանց գերագնահատելու օտարախոս և այլադավան հայերի դերն ու նշանակությունը՝ անհրաժեշտ եմ համարում ընդգծել նրանց կարևորությունը հայոց պետականության շահերի առաջմղման և, նպաստավոր պայմանների առկայության դեպքում, որոշակի ծրագրերում նրանց հնարավոր ընդգրկման մասին: Ցանկացած պետություն, անկախ հզորության չափից, կարիք ունի այլ պետություններում իր նկատմամբ բարեկամաբար տրամադրված կազմակերպված խմբերի առկայության: ԽՍՀՄ-ը դա անում էր կոմունիստական կուսակցություններ ստեղծելով, ամերիկացիներն անում են զանգվածային մշակույթի տարածումով, մենք կարող ենք անել սփռված Հայության միջոցով և Հայության վերազարթոնքով:

Ա. Պապյան՝ «Մոդուս վիվենդի» հասարակագիտական կենտրոնի ղեկավար

Աղքատները մտնում են, հարուստները՝ գնում

«Հայաստանից վերջին 20 տարվա ընթացքում 1 միլիոն մարդ է արտագաղթել մեր բնակչության 1/3-ը: Միգրանտների 2/3-ը նախընտրել է Ռուսաստանի Դաշնությունը, մոտ 2%-ը՝ ԱՊՀ երկրները, 15%-ը՝ եվրոպական երկրները, իսկ 10 %-ը՝ ԱՄՆ-ն: Հայաստանին ավելի բնորոշ է էմիգրացիան, այսինքն՝ հայերը սովորաբար տեղափոխվում են այլ պետություններ», - Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) այս տարվա «Մարդկային զարգացման զեկույցը» ներկայացնելիս՝ ասաց Միգրացիոն գործակալության պետի տեղակալ Իրինա Դավթյանը: Հարցին, թե կարելի՞ է ենթադրել, որ մեր երկրի բնակչությունը հիմա 2 միլիոն է, տիկին Դավթյանը պատասխանեց. «Հաշվարկվել է 3 միլիոն 800 հազար, որից մոտ 1 միլիոնն արդեն լքել է Հայաստանը»:

Անդրադառնալով մյուս երկրներում տեղի ունեցող մարդկային տեղաշարժերին, Ի. Դավթյանը նշեց. «Աշխարհի բոլոր պետությունների քաղաքացիներն էլ փոխում են իրենց բնակության վայրը: Այս տարվա զեկույցի համաձայն, մարդիկ ավելի շատ տեղաշարժվում են, այսինքն փոխում են իրենց բնակության վայրը նույն երկրի ներսում, քան՝ պետությունից պետություն: Միջազգային տեղաշարժվողների թիվը կազմում է 200 միլիոն, իսկ իրենց երկրների ներսում տեղաշարժվողների թիվը 4 անգամ գերազանցում է միջազգային միգրանտների թվին»:

Նրա խոսքերով, միջազգային միգրանտների մեծ մասը սովորաբար տեղափոխվում է մի զարգացող երկրից մեկ այլ զարգացող երկիր, կամ մեկ զարգացած երկրից՝ մեկ այլ զարգացած երկիր. «Տեղափոխվողների 1/3-ն է միայն զարգացող երկրից տեղափոխվում ավելի զարգացած երկիր: Նրանց մոտ 40%-ը տեղափոխվում է հարեւան երկիր: Միջազգային միգրանտների 48%-ը կանայք են, եւ այս թիվը բավական կայուն կերպով պահպանվել է վերջին հինգ տասնամյակների ընթացքում»: Բացի այդ, տիկին Դավթյանը նշեց, որ չնայած զարգացած երկրների խոչընդոտներին, աշխարհը զգում է միգրացիոն տեղաշարժերի կարիքը. «Զարգացած երկրները խոչընդոտներ են դնում եւ ընդունում են միայն այն մարդկանց, որոնց կարիքը զգում են: Աղքատ երկրների քաղաքացիներն ավելի սահմանափակ են տեղաշարժվում: Բավական է նշել Աֆրիկայի օրինակը, որի բնակչության ընդամենը 1 %-ն է Եվրոպա գնացել»:

Ա. Խ.

հայաստանցիները՝ առաջատա՞ր

Ռուսաստանի Արդարադատության նախարարության կողմից հրապարակված տվյալների համաձայն, 2009 թվականի առաջին 6 ամիսներին Ռուսաստանի տարածքում ՌԴ եւ այլ պետության քաղաքացիների միջեւ 29 հազար 317 ամուսնություն է պաշտոնապես գրանցվել: Ըստ այդմ, նշված թվով «միջազգային» ամուսնություններից 4 հազար 144-ը գրանցվել է Հայաստանի եւ Ռուսաստանի քաղաքացիների միջեւ: Այս ցուցանիշով հայաստանցիները «միջազգային» ամուսնությունների ցուցակում երկրորդ տեղում են: Առաջին տեղում ուկրաինացիներն են՝ 7 հազար 298 ամուսնություն: Երրորդ տեղում գտնվող տաջիկստանցիներից մի փոքր ետ են մնում Ադրբեջանի քաղաքացիները: Նշված ժամանակահատվածում Ադրբեջանի եւ ՌԴ քաղաքացիների միջեւ 3 հազար 33 ամուսնություն է գրանցվել: Վրաստանի եւ ՌԴ քաղաքացիների միջեւ ամուսնությունները խիստ նվազել են՝ ընդամենը 431 գրանցում: Ռուսաստանցիների հետ ԱՊՀ երկրների շարքում ամենաքիչը ամուսնացել են Թուրքմենստանի քաղաքացիները՝ 13 ամուսնություն, իսկ ընդհանուր վերցրած՝ Չեխիայի քաղաքացիները՝ ընդամենը 12 ամուսնություն:

Ինչեւէ, պետք է նկատի առնել, որ «միջազգային» ամուսնությունների նման առատության պատճառը ՌԴ քաղաքացիություն ստանալու ձգտումն է: Եւ եթե նկատի առնենք, որ Ուկրաինայի բնակչությունը Հայաստանի բնակչությունից մոտ 16 անգամ ավելի է, ապա կարելի է ասել, որ հայաստանցիներն այդ ձգտումով առաջատարն են: Սրան գումարած՝ քիչ չեն նաեւ ԱՊՀ երկրներից, այդ թվում՝ Հայաստանից Ռուսաստան մեկնած այն քաղաքացիները, որոնք «ճաալու տեղ ունենալու» նպատակով «քաղաքացիական ամուսնությունների» են ձգտում ՌԴ քաղաքացուհիների հետ:

ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ես հայ եմ: Եւ այդ կ'ըսեմ ոչ թէ միայն առիթի բերումով, այլ հպարտութեան զգացումով՝ հայեացքս ուղղելով իմ արմատներուն, իմ վաղեմի նախնիներուս ճանապարհին:

Ես հպարտութեամբ կը քալեմ Երեւանի փողոցներով, Ծիծեռնակաբերդի բարձունքին խոնարհած եմ Եղեռնի զոհերու յիշատակին առջեւ, ու նորէն հոգիիս մէջ խլրտացած է նախնիներուս կանչը: Ես Հայ եմ»:

Հարոլդ Ռեկիսփան

ՏԵՍԱԿԵՏ

Որտե՞ղ է Կովկասը եւ ովքե՞ր են հայերը

Զանգվածային լրատվության միջոցներով հաճախակի լսում կամ կարդում ենք «Հարավային Կովկասի երեք հանրապետություններ» բառակապակցությունը: Խորհրդային կայսրության տարիներին Հայաստանի Հանրապետությունը տեղադրում էին Անդրկովկասում, իսկ մեր օրերում Հարավային Կովկասում:

Հայաստանը Կովկասի մաս չի կազմում, իսկ հայերը կովկասցի չեն: Հայ ժողովրդի բնօրրան Մեծ Հայքն իր տարածքով համընկնում է այն երկրամասին, որն աշխարհագրական բոլոր քարտեզներում կոչվում է Հայկական լեռնաշխարհ, որտեղ ձեւավորվել է հայ ժողովուրդը ու անցել հազարամյակներ հարատեւած պատմական զարգացման բոլոր փուլերը: Հետեւաբար Հայաստանը Կովկասում չի կարող տեղադրվել, իսկ հայերը կովկասյան ազգ չեն կարող կոչվել:

Բայց և այնպես հարց է ծագում թե ո՞ր ժողովուրդներն են «կովկասյան ազգության անձիք», այսպես կոչված «Лица кавказской национальности».

Փոքր Կովկասի լեռնաշղթան, որպես բնական պատնեշ, սահմանազատում է Հայկական լեռնաշխարհը Վրաստանից, իսկ Մեծ Կովկասի լեռնազանգվածը տարածված է Հայաստանից «յոթ սարեր ու ձորեր» այն կողմում, հեռու Հյուսիսում: Ուրեմն, միամտորեն սխալվում է նա, ով հայերին վերագրում է կովկասյան ազգությունների հատկանիշներ, և մենք՝ հայերս, իրավունք չունենք ճեղանալու աշխարհագրությունից ու ժողովուրդների պատմությունից «բոբիկ», դասերը չսերտած այդ մարդուց, քանզի կովկասցի կարող են լինել այն ցեղերը, որոնց բնօրրանըԿովկասն է: Այդ իսկ պատճառով իրենց ծագումով կովկասցի են աբխազը, ինգուշը, չեչենը, չերքեզը, կաբարդինը, ավարը, ալանը, վրացին, նույնիսկ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում ապրող կազակները, որպես խառնածին համայնք: Հայերը կովկասյան ազգությունների հետ նույնիսկ լեզվական առնչություններ չունեն, քանզի Կովկասում ապրող ժողովուրդների մեծ մասի՝ վրացիների, աբխազների, ադիգեյների, չեչենների, ինգուշների, ավարների լեզուները պատկանում են կովկասյան լեզվաընտանիքին, իսկ հայերի, օսերի և ռուսների լեզուները հնդեվրոպական լեզվաընտանիքին:

Սոչի քաղաքը տեղավորված է Մեծ Կովկասի տարածաշրջանում: Սակայն այդ քաղաքում ծնված, մեծացած և ապրող ռուս մարդուն եթե կոչես կովկասցի, կնեղանա և կարող է նույնիսկ վիրավորել քեզ, թե ինքը ռուս է, կովկասյան ազգության չի պատկանում, քանզի ծագումով կովկասցի չէ, սակայն ապրում է Կովկասում:

Քավ լիցի, ես բոլորովին այն կարծիքին չեմ, որ հարևան աշխարհագրական տարածաշրջաններում կողք-կողքի ապրող ժողովուրդները, իրար հետ փոխհարաբերություններ մեջ մտնելով, մեկը մյուսից չեն փոխազդվելու, մեկը մյուսին ոչինչ չի տալու-առնելու: Սակայն անհեթեթություն է, երբ Արցախի, Լոռվա կամ Ջավախքի հայերը, փոխառնելով կովկասցիների «չերքեզկա» տարազը, այն ներկայացնում են որպես հայկական ազգագրական նմուշ: Նույնիսկ եղավ երկար տարիների մի ժամանակաշրջան, երբ Հայաստանի երգի-պարի պետական համույթը երջանկահիշատակ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ, ամենուրեք ելույթ էր ունենում «կովկասյան ազգության» տարազ հանդիսացող «չերքեզկա» հագած: Եվ մինչև իսկ պատահական չէ, որ հայ մեծատաղանդ երգահան Արամ Խաչատրյանը հայկական թեմայով ստեղծած իր բարձրարվեստ «Գայանե» բալետի պարեղանակների մեջ խցկել է «Լեզգինկա» ոչ հայկական պարը: Այդ երևույթը ես կբնութագրեի ոչ թե որպես ժողովուրդների հոգևոր արժեքների փոխազդեցության կամ մերձեցման արդյունք, այլ հեռացում ազգային արմատներից, հայկականի այլասերում, կովկասացում: Վախենալով, հրաժարվել ենք մեր ազգային արժեքներից, որպեսի հանկարծ չնեղադրեն մեզ ազգայնամոլության հողի վրա:

Այդ իսկ հոգեբանությամբ թույլ ենք տվել, որ մեր տեղանունները՝ քաղաքների, գյուղերի սարերի, գետերի անուններն օտարները կնքեն, ինչպես Ղարաքիլիսա, Համամլու, Ջալալօղլու, Չայքենդ, Ղամարլու, Արազ, Ալագյազ, Սուրմալու, Դավալու, Չաթինդաղ,



Բաշքենդ և այլն: Հանուն ինտերնացիոնալիստական բարեկամության, Հռոմի պապից առավել կաթոլիկ երևալու համար, մենք մեզ հանդուրժել ենք արհեստական անձնանուններ սարքելու, ինչպիսիք են Մելս, Լենդրոշ, Լենվել, Կիրով, Ֆրունզե, Չապաև, Կոմիսար, Խրբրկոս/ Խրուշչով, Բրեժնև, Կոսիգին/, կավելացնեի ես և այլ զավեշտական նորաբանություններ: Ցավալին այն է, որ տերերին և օտարներին հաճոյանալու նպատակով Խորհրդային Միության ժողովուրդներից միայն հայերն են իրենց զավակներին անվանակոչել Սովետ, Վիլեն, Թելման, Ռուզզելտ: Միայն «ինտերնացիոնալիստ» հայը կարող էր երգել «Քույր, Արազ, Արարատ… Հայաստան, Ազերբայջան»:

Որտե՞ղ է Հայաստանը: Համենայնդեպս, այն Կովկասում չէ, այլ Հայկական լեռնաշխարհում է, Աստվածաշնչյան սրբազան լեռնագագաթ Արարատին շրջակա տարածաշրջանում:

Այդ ինչպե՞ս է պատահում, որ ազերիների հորջորջումով ռուսները, եվրոպացիները և աշխարհին Արցախը կոչում են Լեռնային Ղարաբաղ, սակայն Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը, թուրքերին ընդօրինակելով, չեն անվանում Աղրըդաղ, այլ կոչում են Արարատ: Այդ ինչպե՞ս է պատահում, որ Հին Կտակարանում հիշատակված Նոյ նահապետի տապանի հանգրվանած լեռնագագաթի անունն ու վայրը լավ գիտեն Եվրոպայի, աշխարհի հատկապես քրիստոնյա ժողովուրդները և հաճախակի արշավախմբեր են ուղարկում, Արարատի գագաթին Նոյի տապանը հայտնաբերելու նպատակով, սակայն ոչ այդ ժողովուրդները և ոչ նույնիսկ նրանց կողմից ուղարկվող արշավախմբերի անդամները տեղյակ չեն, թե որ լեռնաշխարհի և որ երկրի կենտրոնական մասում է վեր խոյանում այդ սրբազան լեռը:

Պարզից էլ պարզ է, որ այդքանից հետո այդ մարդիկ չեն իմանա ոչ Հայաստանի տեղը, և ոչ էլ հայերի դերը քաղաքակրթության ասպարեզում:

Մենք հայերս, մեղավոր ենք, որ չենք կարողացել մեզ լավ ներկայացնել աշխարհին: Մեղավոր են նաև եվրոպացիները և աշխարհի քաղաքակիրթ մյուս ազգերը, որոնք ծուլացել են կամ չեն ցանկացել ճանաչել մեզ և մեր երկրի պատմությունը: Այլապես ինչպե՞ս հասկանալ, որ լավ են յուրացրել հրեական պատմությունը և լավ ճանաչում նրանց հայրենիքը՝ Հրեաստանը: Իրավունքն ու արդարությունը հզորի բաժինն է: Սակայն պարզվում է նաև , որ աշխարհաճանաչ լինելու հատկությունը նույնպե՞ս ուժեղի մենաշնորհին է: Այլապես աշխարհը չէր ճանաչի հրեա ժողովրդի ցեղասպանությունը, և անտարբեր կմնար Իսրայել պետության իրավունքների հանդեպ: Այդ իսկ պատճառով հրեաների հայրենիքը կոչում են ավետյաց երկիր, իսկ նրա բնիկներին մեծարում են, որպես Աստծու ընտրյալ ժողովուրդ:

Օսմանյան կայսրությունում պետական մակարդակով վարում էին բնիկ ժողովուրդների թուրքացման քաղաքականություն, ռուսական կայսրությունում ռուսացման քաղաքականություն: Խորհրդային տարիներին մեզ միամտորեն հավատացնում էին, թե այդ կայսրության մեջ մահվան են դատապարտված ռուս, վրացի, լատիշ, էստոնացի և այլ ազգությունների պատկանող ժողովուրդները, քանի որ պատմական զարգացման հետևանքով

առաջացել է միատարր մի հանրություն, որը կոչվում է սովետական ժողովուրդ: Խորհրդային տարիներիներին մեզ պարտադրվել է մի նոր գործընթաց, մի նոր աշխարհայացք, համաշխարայանացում /գլոբալիզացիա/ անվան տակ, որն, իբր, աշխարհի ժողովուրդների առանձնահատկությունները ջնջելով, մարդկության տեսակները համահարթեցնելով, ձևավորելու է երկիր մոլորակի բնակիչների մի նոր ամբողջություն` համաշխարհային ազգ:

Ինչպես մարդկության պատմական զարգացման բոլոր փուլերում, քաղաքական վարիվերումների ճակատագրական ժամանակահատվածներում, այնպես էլ այժմ, մեր օրերում, մենք հայերս, նետվում ենք ժամանակից առաջ, մեզ ներկայացնում ենք որպես նոր գաղափարների կրողներ, առաջամարտիկներ և, դեռևս մեզ պարտադրված «կովկասյան ազգության» պատյանից չազատված, մեզ հռչակում ենք «համաշխարհային ազգ», թե տեսեք, լավ իմացեք, որ մեզ է պատկանում մարդկության զարգացման բոլոր փուլերի նախակարապետի փշազարդ դափնին:

Մենք, հայերս, ամենուրեք, ամեն հարցում առաջինը լինելու մարմաջով ենք տառապում: Չէ՞ որ «մերն ուրիշ է»: Մեր ազգային հավատալիքներից հրաժարվելով, առաջինը մենք ենք 301 թվին քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակել: Առաջինը մենք ենք երիտթուրքերի հետ զինակցել, թուրքական սուլթանին տապալելու համար և քաղել դրա դառը պտուղները: Բոլշևիկներին և քաղաքական այլ ուժերին առաջինը մենք ենք աջակցել, ռուսական կայսրությունը խորտակելու նպատակով 1920 թվին Բաքվի այսպես կոչված Արևելքի ժողովուրդների համագումարի ավարտին առաջինը հայ բոլշևիկներն ստորագրեցին Հայաստանի առաջին հանրապետության մահվան դատավճռի տակ: Առաջինը հայերը միամտորեն հավատացին խորտակվող Խորհրդային Միության վերակառուցման գորբաչովյան անիրական ծրագրին: Առաջինը հայերը դարձան մոլեռանդ ինտերնացիոնալիստներ ու աշխարհով մեկ սկսեցին քարոզել սովետական ժողովուրդների «անխախտ» բարեկամությունը, իսկ արդյունքում սումգայիթյան ողջակիզման ենթարկվեցին:

Մենք, հայերս, չենք ուզում խրատվել, մեր պատմությունից դասեր քաղել ու այսօր էլ նս շքերթի ենք ելել համաշխարայնացման գործընթացի առաջամարտիկի դրոշը ոչ մի այլ ազգի չզիջելու նպատակով:

Մենք, հայերս, դասեր քաղելով մեր ժողովրդի փորձանքներով լի անցյալ պատմությունից, պարտավոր ենք զգուշանալ, ջուրը չտեսած չբոբիկանալ ու չմերկանալ, այլապես այս անգամ էլ կհայտնվենք համաշխարհայնացման ճզմող, համահարթեցնող հզոր մեքենայի անիվների տակ, այնուհետև մեզ կգրանցեն անհետացման վտանգը դիմակայող ցեղատեսակների Համաշխարհային Կարմիր գրքում:

Մենք կովկասցի չենք և չենք ցանկանում դառնալ համաշխարհային առաջին ազգատեսակը:

Հովհաննես ՄԵԼՔՈՆՅԱՆ
Լոռու մարզային արխիվի նախկին տնօրեն

«ՊՐԱՎԴԱ»-Ի ԵՎ ԱՆԿԱԽ ՄԱՐԴԱԲԱՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՈՎ ԷԼ՝
ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ Է

Ռուսական «Պրավդա» թերթը, հետևելով «Եվրոնյուզ» հեռուստաալիքին, նյութ է պատրաստել, որը սկսվում է հետևյալ բառերով. «Պատմական Ղարաբաղը պատկանում է հայերին»: Թերթը ներկայացնում է անկախ մարդաբանների ուսումնասիրությունները, մարդաբանները Ղարաբաղը ճանաչել են որպես հայկական տարածք. «Այժմ այնտեղ ապրող հայերը հին ժամանակներում Ղարաբաղում ապրող մարդկանց իրավահաջորդներն են», գրում է ռուսական թերթը:

«Պրավդան», անդրադառնալով Աթենքում կայացած ԵԱՀԿ ԱԳ նախարարների նիստին, մասնավորապես հայ-ադրբեջանական հարաբերություններին, որոշել է պարզել, թե ում է պատկանում Ղարաբաղը իրականում:

Թերթում նշվել է, որ մինչ 13-րդ դարը Ղարաբաղում ապրել են բացառապես հայեր, և միայն 13-րդ դարում են առաջին թուրքական ցեղերը հայտնվել Ղարաբաղում: «Դարերի ընթացքում հայերի ու թուրքալեզու ցեղերի միջև տեղի են ունեցել բախումներ: Այնուհետև` 1918-20 թվականներին, Հայաստանի և Ադրբեջանի միջև Ղարաբաղում նոր բռնություններ են գրանցվում, որն ի վերջո հանդարտեցնում են բոլշևիկները: Այսպես` 1921-ի հունիսի 3-ին Կովկասյան բյուրոյի նիստում նախ որոշում է ընդունվում Ղարաբաղը թողնել Հայաստանի կազմում, այնուհետև, Ստալինի միջնորդությամբ, այն հանձնվել է Ադրբեջանին: Փաստորեն այս ցավոտ միջադեպի ողջ պատասխանատվությունը ընկած է բոլշևիկների վրա», եզրակացնում է ռուսական պարբերականը:

Թերթը նաև տեղեկացնում է, որ Գորբաչովի կառավարման ժամանակներում, 1988-ի փետրվարին, կրկին «առաջացավ» ղարաբաղյան հիմնախնդիրը: «Այդ ժամանակ ադրբեջանական Սումգայիթ քաղաքում ազերի ազգայնականները հայ բնակչության նկատմամբ իրականացրին թալան ու բռնություններ: Եվ հենց այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որի բնակչության 94 տոկոսը հայեր էին, արդարացիորեն հայտարարեց, որ դուրս է գալիս Ադրբեջանի ՍՍՀ-ի կազմից:

1991-ի սեպտեմբերին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետությունը: Որից հետո սկսվեց պատերազմը, որը ձգվեց մինչև 1994-ի մայիսի 12-ը` հայկական բանակի հաղթանակով, որին սատարում էր նաև հայկական ընդարձակ սփյուռքը», եզրափակել է ռուսական թերթը:

Ավելորդ չենք համարում նաև նշել, որ «Պրավդա»-ի այս հոդվածը բողոքի մեծ ալիքներ է բարձրացրել Ադրբեջանում: Բաքուն նոր էր «ուշքի եկել» «Եվրոնյուզ»-ի հաղորդումից, հիմա էլ ահա ռուսական թերթին պետք է պատասխանի:

Հովիկ ԱՖՅԱՆ

ՌՈՍՏՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԵՐԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ԵՆ ՀԱՅԵՐԸ

Դոնի Ռոստովում առաջին պարբերականները հայտնվել են 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին: Քչերը գիտեն, որ այդ թերթը հրատարակում էին Նախիջևանից եկած հայերը: Այսպես, «Պրազովսկի կրայը» թողարկում էր Ս. Հարությունովը: 1891-ին նա ձեռք բերեց «Դոնսկոյե պոլե» թերթի հրատարակման իրավունքը, անվանափոխեց և նորացված տեսքով թողարկեց: Ռուսաստանի հարավում թերթն ամենաժողովրդականն էր, այնտեղ տպագրվում էր ինքը` Ա. Պ. Չեխովը:

«Դոնսկայա պչելա» թերթի խմբագիրը հայտնի գրքասեր Օ. Տեր-Աբրահամյանն էր: 19-րդ դարի վերջերից նա հրատարակում էր նաև Донско-Азовский русско-армянский календарь տարեգիրքը, որը պարունակում էր տեղեկատվական նյութեր և պատմում էր Դոնի հայ գաղթօջախի կյանքի մասին:

Ռոստովում պակաս հայտնի չէր Մ. Բերբերյանի հրատարակած «Դոնսկայա ռեչը»:

Բայց նախիջևանցիները երազում էին նաև սեփական թերթերի մասին: 1878-ին Ռ. Պատկանյանը Պետերբուրգում մամուլի գլխավոր վարչությանը խնդրեց թույլատրել տպագրելու «Նոր Նախիջևանը», որի խմբագիրն ու հրատարակիչը ինքն էր լինելու: Նա մերժում ստացավ այն պատրվակով, որ Նախիջևանում և Ռոստովում չկան հայերենին տիրապետող պաշտոնյաներ, որպեսզի թերթը գրաքննության ենթարկեին:

Այնուամենայնիվ 20-րդ դարի սկզբին Նախիջևանում սկսեցին լույս տեսնել հայերեն թեր-թեր: Առաջիններից մեկը դաշնակցականների «Աղավնին» էր: Ապա հայտնվեցին «Նոր կյանքը», «Մեր ձայնը», «Լույսը», «Մեր խոսքը», «Փետուրը», «Գաղթօջախը»:

1920-1940 թթ. լույս տեսան «Չքավորություն», «Բանվորի պայքարը», «Լենինի ուղիով», «Մուրճ ու մանգաղ», «Գրոհ», «Բոլշևիկ» հայկական թերթերը: Դրանց հավաքածուները պահպանվեցին ռուս-հայկական բարեկամության, իսկ մեր օրերում` երկրագիտության մարզային թանգարանի ֆոնդերում: Դրանց ուսումնասիրման և պահպանման մեջ մեծ դեր ունի ՌԴ վաստակավոր ուսուցիչ, հայտնի գավառագետ Ա. Գ. Մալխասյանը: Հիրավի եզակի հրատարակություն է նրա Ռուս-հայերեն զրուցարանը, որը ներառում է Դոնի հայերի բարբառը:

«Вечерний Ростов».

31 московский международный кино-фестиваль 19.06 - 28.06.2009



31 Московский международный кинофестиваль, организованный при поддержке Министерства культуры Российской федерации и прочих, канул в историю.

Отсчёт Московских кинофорумов начался ещё 50 лет назад, так что нынешний 31-ый считается юбилейным. Ныне он является престижным праздником мировой кинематографии.

Недаром своим присутствием и представлением своих фильмов почтили форумы такие акулы Голливуда, как Майкл Манн со своим новым фильмом «Джонни Д.» и обаятельный оскароносец из кинофильма «Пианист» - Эндриан Броди. На этот раз Э. Броди представил себя в главной роли нового кинопредставления «Кадиллак рекордз». Особый статус и вес XXXI ММКФ добавляет тот факт, что, как отметил Никита Михалков, в фильме «Джонни Д.,» в главной роли прославленный Джонни Депп был представлен в Москве до мирового кинопроката и это очень важный факт. Своим присутствием почтил кинофестиваль даже первый (он же последний) президент СССР М. С. Горбачёв со своей охраной.



Интерес к данному событию проявил и Михаил Задорнов со своей знатной семей, вместе с непревзойденным актером Сергеем Безруковым (фото).

На грузинско-германский фильм режиссера Д. Цинцадзе «Посредник» я ходил 3 раза. И каждый раз хотелось как бы перемотать пленку, дабы вспомнить, как развиваются события в начале фильма, чтобы найти связку с финалом. И эта таинственность неудивительна, ведь режиссер и исполнитель одной из главных ролей Дито Цинцадзе является учеником великого Резо Чхеидзе (реж. к\ф «Отец солдата»), которого жюри наградило дипломом и статуэткой за крупный вклад в развитие отечественного кинемотографа.

Особо надо отметить фильм Карена Шахназарова «Палата № 6», который вот уже 11 лет успешно возглавляет киноканцерн «Мосфильм», а созданные им фильмы получили более 20 призов на кинофестивалях. И эта картина номинирована на премию «Оскар» американской киноакадемией, как лучший зарубежный фильм. Пожелаем удачи Карену Георгиевичу. В центре фильма, снятого по мотивам повести А. П. Чехова, история главврача психиатрической больницы. Эту роль блистательно исполнил выдающийся актер Владимир Ильин. Жюри фестиваля наградило В. Ильина призом «Лучшая мужская роль».





Внеконкурсный фильм открытия 31 ММКФ «Царь» Павла Лунгина (являющегося председателем жюри), о временах правления Ивана Грозного (исп. актер Петр Мамонов) поразил зрителей своей глубиной, масштабностью, костюмированностью героев. Однако показ был посвящен памяти недавно ушедшего от нас неповторимого Олега Янковского, исполнившего главную роль митрополита Филиппа - друга юности Ивана Грозного.



Стоит посмотреть мексиканский фильм «Пять дней без Норы», который отмечен Специальным призом кинофестиваля. Покончившая с собой Нора заставила своего бывшего мужа в возрасте в течение 5 дней заботиться о своем теле, чего в последние годы жизни ей так не хватало...

Вообще интересных картин на 31 Московском кинофестивале было много. Мнения кинопрофессионалов иногда расходились. Вот, например, Никита Михалков и Владимир Хотиненко обсуждают только что прошедшую ки-







нопремьеру (фото эксклюзив Н. Михалков и В. Хотиненко на улице Арбат). Из документальных фильмов надо отметить киноленты «Тайсон» (реж. Джеймс Тобак), показавший человека, который, несмотря ни на что, сумел подняться к невероятным вершинам, лишь благодаря собственным усилиям, и точно также потерял все по своей собственной вине. Также интересен фильм «Человек на проволоке» (реж. Джеймс Марш), повествующий о французе Филиппе Пети, который на глазах у изумленной публики почти за час прошел по канату, натянутому между «башнями-близнецами» - Всемирного торгового центра в Нью-Йорке 7 августа 1974 года.

На кинофестивале были показаны работы молодых армянских режиссеров. В одном из фильмов знаменитый Армен Джигарханян весьма чувственно и проницательно исполнил армянский танец под мелодию нашего дудука. Танец такой же впечатлительный, как и знаменитый танец (армяне все помнят) Зимзимова в исполнении народного артиста СССР Авета Аветяна из кинофильма легендарного Амо Бекназаряна «Пепо».

И в конце отмечу, что главный приз 31 ММКФ получила грандиозная картина Николая Досталя «Петя по дороге в царствие небесное». 2010 г. принесет в Москву, кроме прочего, 32 Международный кинофестиваль. Будем ждать!

Эдвард ПЕТРОСЯН.

Сплетенные параллели



С большим интересом на 31-ом Московском международном кинофестивале был встречен полнометражный дебют «Сплетенные параллели» Ованеса Галстяна. Фильм рассказывал о двух параллельных жизненных пространствах. В одном - действие происходит в конце Второй мировой войны в Норвегии, где женщина по имени Ханна предоставляет временное убежище сбежавшему военнопленному Аракелу. Появление южанина переворачивает ее жизнь. В другом пространстве фильма - 42-летняя учительница математики Лаура, живущая в Ереване одинокой и замкнутой жизнью. Кажется, ничто не может изменить устоявшийся порядок ее жизни, пока к ней в руки случайно не попадает дневник матери. Как только Лаура впервые узнает историю своих родителей, в ее жизнь также врывается запретная любовь. О том, как создавался фильм «Сплетенные параллели», - в разговоре со сценаристом, режиссером и продюсером картины Ованесом Галстяном.

- История, звучащая в фильме, получилась достаточно европейской. Если убрать из нее национальные черты, в данном случае армянонорвежские, то подобный сюжет мог произойти где угодно. Собственно, так поступает Андрей Звягинцев во всех своих картинах. У вас не было желания воспользоваться тем же методом?

- Для меня было принципиально сохранение национального колорита. Здесь локальная история, которая происходит в двух пространствах. Для этого фильма мне было важно показать культурную единичность норвежского и армянского народов. Это абсолютно разные народы, но очень похожие по монолитности своих культур. И армянский, и норвежский народ очень ценят свою культуру и гордятся ею.

- В вашем фильме есть провокационный момент. Когда норвежская женщина находит в лесу воина-армянина. И непонятно, он дезертир или сбежал из концлагеря?

- Я открою секрет. На самом деле в роли Аракела мы предполагали снимать Симона Абгаряна. Я отправил сценарий во Францию Сержу Аведикяну для того, чтобы он переадресовал его Симону Абгаряну, который живет в Америке. Симон идеально подходил для этой роли. Но после того, как Серж получил сценарий, он связался со мной и сказал, что никому не передаст этот сценарий, потому что это история его жизни. Он сказал: «Я даже не захочу гонорара. Я прилечу в Ереван на следующей неделе, и мы поговорим». Так Серж Аведикян стал Аракелом, чему я безумно рад. А мы не стали развивать тему сбежавшего из концлагеря солдата, потому что Серж не очень подходил для этой роли.

- Лежит ли в основе сюжета фильма реальная история?

- Я знал одного армянина, который на самом деле воевал, но сразу же попал в плен и провел четыре года в концентрационном лагере в Норвегии, недалеко от города Киркенеса. Он мне рассказывал, что годы, проведенные там, были самыми счастливыми годами его жизни. Меня, признаться, поразило это высказывание, потому что четыре года в концентрационном лагере никак не назовешь счастливыми. Но тогда норвежские фермеры платили выкуп немецким офицерам и брали солдат из концентрационного лагеря - там не такие были порядки, как в Освенциме. Фашисты отпускали военнопленных за деньги, и те спокойно проживали в норвежских домах до конца войны. Работали, как все норвежцы, рабскими эти условия труда нельзя было назвать. После окончания войны мой собеседник вернулся в Армению один, без жены. А я подумал, что у него там мог бы закрутиться роман. Ну и все остальное домыслил сам.

- А как появилась история учительницы из Еревана?

- У меня был сценарий в 2002-ом году, после сокрушительного поражения французской сборной на чемпионате мира. История была не про Францию, там было про все, словом, «сплетенные параллели». Стержнем истории была линия про мальчика, который ведет очень активную жизнь с активной гражданской позицией, участвует в демонстрациях и влюбляется в учительницу Лауру. Этот сценарий я показал знаменитому польскому кинорежиссеру Кшиштофу Занусси, и он мне сказал: «Мне очень нравится ваша Лаура, но я хочу знать, кто ее родители, мне хочется знать историю ее жизни». Тогда появилась другая, норвежская, история. Я подумал, что трагедия Лауры состоит в том, что она не знает, кто ее родители, так что это женщина без истории. Почему бы героям моей первой истории не быть родителями героини из истории второй. Потом я показал Занусси эти две истории... Я убрал из нее все, что было связано с футболом, там остались только ученик-учительница и параллельная история ее родителей. И тогда Занусси сказал: «Хорошо, я поверил тебе, да, я знаю, кто ее родители. Пожалуйста, убери этих родителей, они нам уже не нужны». Но я не убрал. Я сказал: «Нет, они останутся». На что Занусси сказал: «Вряд ли ты найдешь деньги на этот проект. Но я даю тебе три года: если ты не снимешь этот фильм, я сниму историю Нарека и Лауры. Правда, мне не нравится имя Нарек, я поменяю это имя, но история Лауры мне понравилась, и я ее сниму сам».

- В России прокатом вашего фильма занимается компания «Парадиз». Вы влияете на ход рекламной компании или полностью полагаетесь на авторитет компании-прокатчика?

- Они лучше меня разбираются в российском прокате. Если честно, я думал, что фильм «Сплетенные параллели» никак не воспримется российским зрителем, потому что тема, которая в нем затрагивается, от них далека. Но я ошибался. ММКФ, напротив, показал, что фильм понравился и вызвал живой интерес. Видимо, потому что там затронуты человеческие отношения, есть душевность, и сюжет оказался понятен и близок россиянам.

Элен МУСАЕЛЯН.

Двуглавая орлица просвещения

У каждой женщины есть маленькая тайна. Была она и у княгини Дашковой, в девичестве – графини Воронцовой. По сей день никто из исследователей жизни её и деяний не смеет с уверенностью утверждать – в 1743 или 44-ом родилась она в Петербурге. Рано лишившись матери, пятеро детей были устроены следующим образом: старший брат Александр остался в семье, старшие сёстры стали фрейлинами при дворе, второй сын отдан был деду, её же, Екатерину, взял на воспитание к себе родной дядюшка Михаил Илларионович, вице-канцлер к тому времени. «Мой дядя не жалел денег на учителей. И мы – по своему времени – получили превосходное образование: мы говорили на четырёх языках, и в особенности владели отлично французским(что в немалой степени способствовало расположению к Дашковой Вольтера и Дидро, умевших ценить изящный слог); хорошо танцевали, умели рисовать; некий статский советник давал нам уроки итальянского, а когда мы изъявляли брать уроки русского языка, с нами занимался Бехтеев; у нас были изысканные и любезные манеры, и потому немудрено было, что мы слыли за воспитанных девиц. Но что же было сделано для развития нашего ума и сердца? Ровно ничего…». А что думает о ней дядюшка-воспитатель, к тому времени уже великий канцлер? Он откровенно признаётся: «Она, сколько мне известно, имеет нрав развращённый и тщеславный, больше в суетах и мнимом высоком разуме, в науках и пустоте время свое проводит».

К 15 годам её личная библиотека насчитывает 900 томов. « Никогда драгоценное украшение не доставляло мне больше наслаждения, чем эти книги», - признаётся она в «Записках..», написанных ею самой. Крестница императрицы Елизаветы, подруга Екатерины Второй задолго до восшествия её на престол, Дашкова большую часть жизни проводит в немилости. Она пишет: «Несмотря на то, что я была графиней Воронцовой по отцу и княгиней Дашковой по мужу, я всегда чувствовала себя неловко при дворе». И тема эта как бы рефреном, повторяясь, пронизывает откровения, кои дошли до нас, возможно, не в полном объёме. Угодничество не в её натуре, льстивой она не умеет быть. О себе пишет: независимая, самолюбивая, порой до резкости, впечатлительная, доверчивая, оригинального ума девица. Нет, уже дама.

Труд Гельвеция «Об уме» - её настольная книга. Рядом с Бейлем, Монтескье, Вольтером и Буало…Нутром чувствует: великие умы подвигают её на великие дела. Однако, «глубокая меланхолия, размышления над собой и над близкими мне людьми изменили мой живой, весёлый и даже насмешливый ум». То и дело посещают её мысли о разумности современной формы правления, о нравах высшего общества, о лицемерии церкви, об отсталости и варварстве, если не дикости основной массы населения, о предрассудках и предубеждениях, о жалком положении науки… Нечто подобное ощутит она и позже, посетив Лондон и увидев там русские рукописи в библиотеке Оксфорда. Быстрого ума её хватило на создание там же русско-греческого словаря с изложением грамматических правил. Задолго до того она поставлена была управлять двумя академиями. Кто знает, может тогда она и прониклась мыслью: просвещение – залог общественного блага. А мысли, как известно, материализуются. Самокритичная Дашкова отмечает в себе трезвый ум, хладнокровие, чарующую улыбку, расчётливое обаяние, умение разбираться в людях...

Опальный ум на многое способен! Дашкова учится убеждать, привлекать. Если просвещение ведёт к свободе, то та свобода без просвещения способна породить анархию и беспорядок. Дашкова за конституционную монархию. Потому и не случайно её участие в перевороте 1762 года, перевернувшем – как покажет время – и её представления, и представления о ней. Всякий раз, удаляема от двора, Дашкова обретала нечто, что сегодня может быть обозначено понятием – дистанциированное мышление. При сём слишком горда, не скрывает антипатий, не позволяет принижать своей личности. Даже всем известному Джованни Джакомо Казанове, приехавшему в Россию в 1765 - 66 годах и посетившему её в деревне. «У меня было письмо мадам Лольо к княгине Дашковой, удалённой из Петербурга после того, как она сказала своей государыне в восшествии на престол, который она надеялась разделить с нею... (Как тут не вспомнить предостережение А.Н.Радищева: « Нет и до скончания мира примера, может быть, не будет, чтобы царь упустил добровольно что либо из своей власти, сидяй на троне»). Мне сказали, что Панин - отец княжны; до тех пор я упорно думал, что он её возлюбленный…». Не укладывалось у Казановы в голове, что Дашкова, женщина, может стоять во главе Петербургской академии наук. «Кажется, Россия есть страна, где отношения обоих полов поставлены совершенно навыворот: женщины тут стоят во главе правления, председательствуют в учебных заведениях, заведывают государственной администрацией и высшею политикой. Здешней стране не хватает одной лишь вещи, - а этим татарским красоткам, - одного лишь преимущества, именно: чтобы они командовали войсками». А что Дашкова? К тому времени у неё на счету немало реализованных идей. Разработана примерная система образования передового русского юноши. Издан по её инициативе первый толковый словарь русского языка (Возможно, как отголоски странного её ощущения после замужества, когда, приехав в Москву, блестяще владея языками, она не могла объясниться со свекровью, не владевшей ни одним иностранным).



Кабанель, Александр - Портрет графини Елизаветы Андреевны Воронцовой-Дашковой.

Перу Дашковой принадлежат все толкования понятий, имеющих отношение к нравственности, политике и управления государством.

Добролюбов первую свою работу посвятил благодарному разбору места и значения «Собеседника любителей российского слова», журнала, ориентирующего педагогические науки на философию просветительства. Но было нечто в ней, в этой женщине, отмеченной точностью восприятия и глубиной проникновения во всё, к чему она прикасалась. Кэтрин Уилмонт, гостившая у неё, пишет: «Я не только не видывала никогда такого существа, но и не слыхивала о таком. Она учит каменщиков класть стены, помогает делать дорожки, ходит кормить коров, сочиняет музыку, пишет статьи для печати, знает до конца церковный чин и поправляет своих домашних актёров, когда они сбиваются с роли; она доктор, аптекарь, фельдшер, кузнец, плотник, судья, законник...». Одним словом, Пётр Первый в юбке. Не будь она такой по натуре, вынесла бы она лишения, кои выпали на её долю, когда, оставшись без мужа, приняв при том на себя все его карточные долги, она, эта высокородная особа... Вспомним, перед нами «Речь, говоренная при открытии императорской Российской академии княгинею Екатериною Романовною Дашковой её императорского величества статс-дамою, императорской Академии наук директором ордена святой Екатерины Стокгольмской академии наук и Санкт-Петербургского Вольного Экономического общества членом». И вдруг - по смерти мужа – она, лишая себя всего необходимого, осознаёт, что ко всему она ещё и – хозяйственна, расчётлива, практична. Качества

эти пригодились Дашковой, когда она приняла дела Российской Академии. Одному Богу ведомо, как она справилась с разрухой и разором в ней, как прививала рачительность, и – через неё – уважение к достоинству своему и чести Отечества. «Меня не пугали никакие лишения», - признается она в своих «Записках...». А давно ли писали ей в альбом посвящения?! Вот одно из них, принадлежащее, как полагают, перу Якова Княжнина:

А ты, имея ум пространный,
Чувствительность и тонкий вкус,
Предстательница здешних муз,
Свершай тобою путь избранный.
Сей путь тебе принадлежит.
Хоть тяжек он, но полон славы.
Хоть злость невежества претит,
Но Русской честь на нём державы.

«Чувствительность и тонкий вкус»? На сём, пожалуй, следует и нам остановиться на мгновенье. Поскольку «она всякому чувству отдавалась вся», на 16-ом году жизни, когда князь Дашков слишком свободно стал говорить ей любезности, она подошла к дяде-канцлеру и сказала: «Дядюшка, князь Дашков делает мене честь, просит моей руки». Находчивость и решительность показали, как свободно она умеет управлять ситуацией. Дашков, блистательный повеса, так и не смог объяснить первому сановнику империи, что слова его не заключали в себе именно такого смысла… И он женился на племяннице канцлера, той, которая вскоре придёт к заключению: «Придворная атмосфера душит развитие энергичных натур».

Ну как было держать её при дворе?!

О таких, самостоятельного суждения женщинах писал А. С. Пушкин в «Рославлёве»: « …Я знаю, какое влияние женщина может иметь на мнение общественное… Я не признаю уничижения, к которому принуждают нас…» - говорит его героиня. Сравним: «Я часто осмеливалась выражать недовольство» (Екатерине Второй). Это Дашкова, краеугольный камень добрых дел и деяний. Жизнь словно пропущена через призму её совести: «Может быть, у меня романтическое представление о дружбе, но я ему следую, и мои принципы в этом вопросе так же неизменны, как и мой характер. Я осмеливаюсь быть другом моих друзей, в каких бы обстоятельствах они ни находились и как бы к ним ни относились другие. И обратное: никакие соображения не могут заставить меня сохранять добрые отношения с теми (или с той), кто прорвал с моим другом. Вот как я веду себя и буду вести. Называйте это как хотите, но поймите, что я страдаю, если со мною поступают иначе…». Это из письма к брату. И далее:« Вот, дорогой брат, с каким сентиментальным животным вы имеете дело: осмеливайтесь мне быть другом открыто, отдавать дань справедливости душе – смею сказать – чистой и благородной, и я, в свою очередь, буду для вас всем…» Эту правду о сокровенном в душе Дашковой донесли до нас сёстры Уилмонт: одна – в ироническом ключе, другая – преклоняясь перед силой духа своей русской мамы…

Воображение – едва ли не лучший реставратор. Живописец может дать высочайшего мастерства сходство. Но важнее, куда важнее уловить главную черту лица. В следующую минуту её уже нет, и если вы… Эту мысль Ф.М. Достоевского можно было бы и расширить, тем более, что располагаем мы и нелицеприятным признанием Дени Дидро: «Она отнюдь не красавица. Невысокая, с открытым и высоким лбом, пухлыми щеками, глубоко сидящими глазами, не большая и не маленькая, с черными бровями и волосами, несколько приплюснутым носом, крупным ртом, крутой и прямой шеей, высокой грудью, полная – она далека от образа обольстительницы, стан у неё неправильный, несколько сутулый. В её движениях много живости. Но нет грации…. Печальная жизнь отразилась на ее внешности и расстроила здоровье. В декабре 1770 года ей было двадцать семь лет, но она казалась сорокалетней…».

Надо отдать должное великому энциклопедисту, отлично помнившему, как достойно вела себя Дашкова в Париже, отказав бывшему французскому послу в Петербурге Рюльеру, написавшему о правлении Екатерины Второй несколько неосторожную книгу. Такт и выдержку княгини он отметил в своём письме императрице, заверив ее в том, что сие поколебало уверенность французов в правдивости этой книги. Иначе как объяснить послание Екатерины Второй Дашковой: «Заклинаю продолжать любить меня, будьте уверены, что моя пламенная дружба никогда не изменит Вашему сочувствию»?

Но та же императрица, наслушавшись мудрого француза относительно того, как ей править в России, (Дидро имел неосторожность влезть в её дела с престолонаследником Павлом, а Дашкова, пребывая в Москве, не могла предостеречь Дидро от опрометчивых советов), разразилась посланием следующего содержания:

« - Господин Дидро… вы работаете с бумагой, которая все терпит; гладка и не останавливает ни Вашего пера, ни Вашего воображения, а я, бедная императрица, работаю на человеческой коже, которая раздражительна и щекотлива…».

И пока идёт эта переписка, в том числе с Вольтером, Дашкова способствует основанию общества при Московском университете, что не мешает ей разделять мнение того же Дидро: «Нет ни прав, ни законов, ни свободы там, где государство распоряжается правами и законами по своему усмотрению». Однако, интуиция ни разу не подводила Дашкову. Она понимает, что «пресловутая французская вежливость не исходит из сердца». Она прекрасно понимает, что «в пользу свободы вопиют все права, но есть мера всему», ибо: «должно приуготовить рабов к принятию вольности прежде, нежели будет им дана какая собственность». А чтобы учить, надо учиться самой.

И она предпринимает путешествия.

«Безжалостная наблюдательность» становится ее учителем. «Тут и гости дядиного дома пришли на ум. Я сравнивала их страны с моей родиной и во мне пробудилось горячее желание путешествовать(позже она будет настаивать, чтобы путешествие рассматривалось как обязательный элемент образования); но я думала, что у меня никогда не хватит на это мужества и полагала, что моя чувствительность(вспомним посвящение Я. К.) и раздражительность моих нервов не вынесут бремени болезненных ощущений, уязвленного самолюбия и глубокой печали любящего свою родину сердца». Чистосердечное признание это не мешает ей тем временем собирать коллекцию минералов.

Не обошёл и ее крах просветительских иллюзий. Но впереди был свет: слагалась единая воспитательная система. Напрасно Дашкова терзалась страхами. Тот же Дидро, отмечая твердость ее намерений, свидетельствует: «Это серьезный характер. По-французски она изъясняется совершенно свободно. Она не говорит всего, что думает, но то, о чем говорит, излагает просто, сильно и убедительно. Сердце ее глубоко потрясаемо несчастиями, но в ее образе мыслей проявляется твердость, смелость и гордость. Она уважает справедливость и дорожит своим достоинством. Княгиня любит искусства и науки, она разбирается в людях и знает нужды своего отечества. Она горячо ненавидит деспотизм и любые проявления тирании. Она имела возможность близко знать тех, кто стоит у власти, и откровенно говорит о добрых качествах и недостатках современного правления. Метко и справедливо раскрывает она достоинства и пороки новых учреждений...». Что ещё?.. Узнав о болезни мужа, уже на сносях, пренебрегая болью и опасностью, она рвётся к нему... Естественно, что такая женщина не могла не играть заметной роли в той среде, к которой принадлежала. Как видим, и не только... В руках у нее одинаково смотрелись и резец, и скальпель, и мольберт.

